

Բ. Ի Շ Խ Ա Ն Ե Ա Ն

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ
ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
===== ՊՐԵԼԵՎԵ =====

(Քննական վերլուծութիւն)

Տպագործութիւն
Տպագործութիւն
31.

ТИФЛИСЪ.

Типографія Канц. Намісника Е. И. В. на Кавказѣ.
1914.

9(47.925)

Դ - 68

9m

9(47.925)
h-68

1 SEP 2011
19 AUG 2006

Բ. Ի Շ Խ Ա Ն Ե Ա Ն

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ==
ՅԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԵՐԻ
==ՊՐՈԲԼԵՄԸ

9-14-89.

(Քննական վերլուծութիւն)

Ա. Հայրացած

18276



26 APR 2013
2005.00A.01

8439

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էարցի զբութինը:—Վրաց և հայ ժողովուրգների հասարակական և պրօֆեսիօնալ կազմը:—Ծնտեսական տիրապետող կատեգորիաները երկու ազգերի մէջ:—Խոշոր կալուածատիրութեան կըլիքիսը և նատուրալ անտեսութեան նահանջը փողային տնտեսութեան հանդէպ:—Կազմալուծման երկու կարգի ուղղութիւններ վրաց աղնուականութեան մէջ:—Ծնտեսական էվոլյուցիայի օբէնքի համազօր ոյժը:—Մեր երկը արդինաբերական ոյժերի զարգացմը և հայկական կապիտալի դերը զրամէջ:—Հայկական կապիտալի դիւքերը քաղաքային կուտուրայի մէջ և նրա հոսանքը դէպի գաւառները:—Վրացական ինտելիլենցիայի կրթիկան:—Անտիարմենիզմ:—Տիրապետող գասակարգերի տարբեր իդէօլոգիաներ:—Փէոդալական և մանը բուրժուական նացիօնալիզմը գրացիների մէջ:—Վրաց գիւղացիութեան յարաբերութինը դէպի կալուածատէր ազնուականութիւնը մի կողմից և դէպի արդինաբերական բուրժուազիան միւս կողմից:—Կապիտալի շահեցման կուլտուրական հետեւանքները գաւառներում: — Օրինակներ զորձնական կեանքից:—Վրաց գեղերալիստների քաղաքական իդէալը:—Նրա կլիտիկան:—Խոշոր բուրժուական նացիօնալիզմը հայերի մէջ:—Տարբեր նացիօնալիստական իդէօլոգիաների սօցիալակտն բնոյթը:—Հայ-վրացտկան յարաբերութիւնների համերաշխութեան գաղաքարի իրականացման ըէալ զրաւականները:—Եղրափակումներ:



2830-2002

I

Կան մարդիկ, որոնք կարծում են, որ հայ-
վրացական յարաբերութիւնների խաղաղ
ընթացքի հրբեմանակի խախտումը լոկ ար-
դիւնք է թիւրիմացութեան և չարամիտ ինտ-
րիգների։ Ուստի, մտածում են նրանք, պէտք
է խուսափել հրապարակական քննդատու-
թիւններից՝ արամազդրութիւնները երկուս-
տեք աւելի չը պղտոր լու համար։

Առաջին իսկ հայեացքից մատնվում է
այդ կարծիքի խախուտ լինելը։ Զի կարելի արհամարհել հասարակական փաստը և այն-
տեղ, ուր երևոյթը իր խոր պատճառակ-
ցական հիմքերն ունի, քօղարկել նրա գո-
յութիւնը։ Հրապարակական բոլոր արտա-
յայտութիւնները հայ-վրացական համակեն-
ցաղ յարաբերութիւնների մասին՝ բանաւոր
թէ մամուլի միջոցով՝ պախ սրակելի են
այն բոլոր գէպքերում, եթէ նրանք ունեն
կրքոտ, թունաւոր բովանդակութիւն, գրգը-

Ծանօթ. հեղին.—Այս աշխատութիւնը կարգացվել
է համառատարար իբրև հրապարակական գասակօսու-
թիւն Թիֆլիսում, 1914 թ. փետրվարի 5-ին, ապա այս
ձևով լոյս է տեսել ոռուերէն՝ Էկոնомичесکیя և общ-
ественныя основы армяно-грузинскаго антиаго-
низма վելնազը տակ (հրատ. «Գուտտենբերգ» գրա-
խանսիթի)։

սիչ, ագիտացիական բնաւորութիւն՝ մի ժողովուրդ միւսի դէմ թշնամացնելու դիտաւորութեամբ։ Ընդհակառակը չափազանց օգտակար են և ցանկալի այնպիսի տեսութիւններ, որոնք նպատակ ունեն փաստացի վերլուծութեամբ և ակադեմիական լրջութեամբ քննել ու լուսաբանել ծագած պայքարի հիմնական աղբիւրները, նրա էութիւնը՝ որպէս այդպիսին։

Հայ-վրացական յարաբերութիւնների կրիպիւր նոր երեսոյթ չէ և ոչ էլյանկարծակիկի եկած։ Պօլիտեխնիկումի կառուցման տեղի հարցի շուրջը ալիքաւորող արտասովոր աղմուկը սոսկ մի էջն էր այն ձիգ պատմութիւն, որի անունն է հայ-վրացական հակամարտութիւնների տարեգրութիւն և որը, որպէս գաղափարային հոսանքի և պօլեմիկական արտայայտութիւնների մի երկար շղթայ, իր սկիզբն է առել այդ հարեւան աղգերի կուլտուրական վերածնութեան շրջանից։

Յիշեցէք Արծրունու և ձավճավածէի շըրջանը և շարունակեցէք կարմիր թելի ծայրը մինչև մեր օրերը։

Նշանակում է՝ յարաբերութիւնների անհաշտ գրութիւններ եղել են, կան և պիտի շարունակեն իրանց գոյութիւնը՝ երբեմն երբեմն գուցէ աւելի սուր ու շեշտակի ձեւերով, քանի կանգուն կը մնան նրանց ծագման ու զարգացման իրական նախապայմանները։

Գրեթէ ամեն անդամ, երբ որևէ համա-

գործակցութիւն, ընտրական ակտ՝ քաղաքային կամ Պետ. Դումայի շուրջը, կամ որևէ կրթական-կուլտուրական գործ (ինչպէս օրինակ պօլիտեխնիկումի դէպքն էր) շվման կօնկրետ Ֆօմենտներ են պատրաստում հայ-վրացական աղգաբնակութիւնների համար. ամեն անդամ, երբ այդ երկու հարեւանների գրաւած դիրքերը և հասարակական աղգեցութիւնները գալիս և բաղիսում են միմեանց հրապարակով, այդ բոլոր դէպքերում կատաղի Փշշոցով գլուխ է բարձրացնում նացիօնալիզմը, խախտվում և պղտորվում են նրանց մինչ այդ ժամանակվայ «խաղաղ» փոխ-յարաբերութիւնների ռնօրմալը ընթացքը։ Անշուշտ, այդ մօմենտները չեն, որոնք հիմք ու բովանդակութիւն են տալիս յարաբերութիւնները ուժինապէս լարող նացիօնալիզմի. նրանք միայն փափուկ առիթներ են ծառայում՝ արդէն գոյութիւն ունեցող փաստական հակասութիւնները տարբեր իրականութիւնների միջնե, ցայտուն էջերով երևան գալու. նրանք առաջինը չեն ստեղծում անտագօնիզմը։

Դուք տեսնում էք, որ մեր առաջ կանգնած է հասարակական մի լուրջ պրօքեմ, որի գոյութիւնը ժիման կամ նրա վրայից անցնել նոյնքան աններելի է, որքան անկարելի է հասկանալ նրա էութիւնը բարոյական նախատինքների և բողոքների ճիշու աղաղակներով կամ համերաշխութեան առաքինութիւնների սոսկ քարոզչութեամբ։

Միայն նորագոյն հասարակագիտական

տեսակէտով կարելի է պարզաբանել կնճռոտ հարցերը ծագած երկու հարևան ազգերի երշկարամեայ յարաբերութիւնների հի թքերում։ Իրականութեան ճշգրիտ, օբիեկտիվ պատկերը կարող է պարզել մեր առաջ արելի լոյսով միայն այն մտածելակերպը, որի համար գոյութիւն չունի իսպառ «իմ» ու «քո» ազգամոլութեան սին ու «հիւանդ» զգացմունքը, իր փաստական անալիզների մէջ, այլ միմիայն գիտական ճշմարտութիւնը։ Նորագոյն հասարակագիտական մտքի ելակէտ չի կարող ծառայել մէկին յանդիմանելու և միւսին գովաբանելու բարոյական ու տեսնենցիող մօտիվը։ Միայն հասարակական պրօգրեսի տեսակէտը՝ որպէս գերազոյն սկզբունք՝ և այդ պրօգրեսը արագացնող ու նպաստող գործոնների պահպանութեան շահները կարող են և իրաւունք ունեն հասարակական երեսյթների բնորոշման ու որակման հիմքեր ծառայելու, միանգամայն անկախ այն հանգամանքից, թէ որ ազգային իրականութեան մէջ են գտնվում—հայկական թէ վացական—մեր երկրի կուլտուրական առաջադիմութեան նպաստող այդ գործոնները։

Որպէս զի չը սահենք մենք սխալ ընդհանրացումների թեք մակարդակի վրայից, ինչպէս յաճախ տեղի է ունենում առօրեայ մամուլի մէջ, և կարողանանք պարզ պատկերացնել մեզ երկու իրականութիւնների կօնկրետ բաղխումների հիմնական աղբիւրները, դիմենք ամենից առաջ այն իրական

մեծութիւններին, այն հասարակական տիրող ոյժերին, «րոնց շահերի մրցակցութեամբ կատարվում են ազգային գունաւորութներով արտայայտված այդ բաղխումները։

Դիմենք նախ երկու ժողովուրդների հասարակական և պրօֆեսիօնալ կազմի բնորոշ կողմերին։



II

Վրաց ժողովուրդը ունի այն բացառիկ իրականութիւններից մէկը, որը պահպանել է տակաւին իր հասարակական ստրուկտուրայի միջնադարեան տիպը: Երկրագնդի վրա միակ տիսուր բացառութիւնն է կազմում, տարաբաղդաբար, վրաց ժողովուրդը, որ մինչև օրս կրում է իր մէջ վաղեմի ֆէոդալիզմի փշտոված բեկորները ամենամեծ չափերով: Ի՞նչ ազգ կամ ժողովուրդ կարող էք ցոյց տալ՝ հին ու նոր կուլտուրայի որբաններում՝ Ասիայում ու Եւրոպայում, որի ողջ ազգաբնակութեան $5,26^0/0$ բաղկացած լինի բացառապէս տոհմային ազնուականութիւնից (ընտանիքի անդամների թւով միասին), ինչպէս վրացիների մէջ ենք գտնում (ըստ առաջին ընդհանուր ժողովրդագրութեան): Որպէս զի այդ տուկոսի քանակական ահոելիութիւնը աւելի աչքի զարնէ, համեմատեցէք նրան կովկասեան միւս գլխաւոր ժողովուրդների ազնուական դասերի յարաբերական մամնակցութեան հետ: Թուրք-թաթարական տարբերի մօտ տոհմային ազնուականութիւնը կազմում է ողջ ազգաբնակութեան $2,61^0/0$, այսինքն վրացականի մօտ կէսը: Կովկասեան ոռուսների մօտ հասնում է այդ յարաբերութիւնը $0,91^0/0$ -ի, իսկ հայերի

մօտ՝ $0,83^0/0$ -ի (բոլոր դէպքերում ընտանիքի անդամների թւով միասին). այսինքն վերջին երկու ժողովուրդների մօտ տոհմային ազնուականութիւնը չէ կազմում մի ամբողջ տոկոսը համայն ազգաբնակութեան:

Միւս կողմից վրացական ազնուականութիւնը քանակական նոյն ահոելիութեամբ գերազանցում է յարաբերաբար կովկասեան բոլոր ազգերի ազնուականութեան: Էստ առաջին ժողովրդագրութեան՝ կովկասեան ողջ տոհմային ազնուականութիւնը բաղկացած էր $170,967$ հոգուց, որոնցից միայն վրացական բաժինը կազմում էր $70,972$ հոգի կամ ընդհանուր թւի $41,53^0/0$, թուրք-թաթարականը՝ $46,996$ կամ $27,50^0/0$, ոռուսականը՝ $28,789$ հոգի կամ $16,84^0/0$, գերջապէս հայկական՝ 9318 հոգի կամ $5,49^0/0$. Ուրեմն վերին բեկուր ազգայինս-հասարակական այդ աննախանձելի կացութեան՝ գրաւում են վրացիները, ստորին բեկուր՝ հայերը: Վրացականը աւելի է հայկականից մօտ ութ անգամ: Այդ դեռ բաւական չէ: Նոյն իսկ անձնական ազնուականների (այսպէս կոչված լավագութեան) և քաղաքացիական ծագումը ունեցող պաշտօնեաների (չինօվլիկների) տոկոսական մասնակցութեան տեսակէտից վրացիները չեն զիջում իրանց վրաւած վերին ծայրը ուրիշներին:

Այդ վերջին դասը կազմում է վրացիների մէջ $1,03^0/0$ ամբողջ ազգաբնակութեան, ոռուսների մէջ՝ $0,81^0/0$, հայերի մէջ՝

0,41% , իսկ թուրք-թաթարական տարբերի մէջ 0,13% : Վրացականը աւելի է հայկականից երեք անգամ: Մինչդեռ վրացիների մէջ այդ դասը բաղկացած է 13,860 հոգուց, իսկ դրանք կազմում են 25,72% այսինքն աւելի քան 1/4 մասը կովկասեան անձնական ազնուականների և չինօվկիկների ընդհանուր թւի, հայերի մէջ, ընդհակառակը, այդ դասը կազմում է 4660 հոգի կամ 8,65% բոլորի:

Այդպիսով վրաց երկու կարգի (տոհմային և անձնական) ազնուականութիւնը և չինօվկիկութիւնը (բիւրօկրատիան) միասին վերցրած ներկայացնում են մի խիստ պատկառելի մասնակցութիւն վրաց կեանքում՝ կազմելով ազգաբնակութեան 6,49% կամ 84,832 հոգի, որոնց հանդէպ կանգնած են հայկական նոյն դասերը միասին՝ 1,24% կամ 13,978 հոգի:

Միանգամայն հակառակ յարաբերութիւններն ենք գտնում քաղաքացիական տարբերի դասաւորութեան մէջ: Այդտեղ վրացիները խոշոր չափերով տեղի են տալիս հայերին, ինչպէս ցոյց են տալիս հետևեալ թւերը *).

*) Կովկասեան բոլոր գլխաւոր ժողովուրդների հասարակական և պրօֆէսիօնալ կազմի մասին տես մանրամասութիւններ իմ հայերէն աշխատութեան—«Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչ. կազմը, պրօֆէսիօնալ խմբաւորումը և հասար. շերտաւորումը», 1914թ.—մէջ:

Քաղաքական կառավագական պարագաների մակարդակը (միավոր)	Անդամականութեան անդամների մակարդակը (միավոր)	Անդամականութեան անդամների մակարդակը (միավոր)	Անդամականութեան անդամների մակարդակը (միավոր)	Անդամականութեան անդամների մակարդակը (միավոր)
Հայեր 6468 6001 123,213 878,186	Վրացիներ 2749 2283 47,768 1,180,276	Տոկոսային յարաբերութեամբ կը ստանանք	Հայեր 0,57% 0,53% 11,02% 78,54%	Վրացիներ 0,20% 0,17% 3,54% 87,40%
Հայեր 32,43% 32,34% 16,35% 12,70%	Վրացիներ 14,00% 12,35% 6,34% 17,00%	Մենք կարող ենք առ այժմ զատել այս աղիւսակից գիւղացիութեան մասնակցութիւնը. մի կրաւրական զանգուած, որ չունի որևէ դրական ու վճռական ազդեցութիւն իր ազգային-հասարակական գործերի ընթացքի վրա:	Վրացիների հասարակական աշխատավայրերի հասարակական տիրապետող սիւների՝ վրաց ագրարային և հայքագագահական (բիւրօգերական) տարրերի վրա: Այդ տեսակէտից արդէն վրաց և հայքագագահական կազմը հակադիր պատկերներ է տալիս մեզ: Քանակով ու որակով տարբերվում են իրարից հարեւան ազգերի սօցիալական ստրուկտուրաները: Եթէ վրաց կալուածատիրական կաթեզօրիհան՝ ասենք	Հայեր 6468 6001 123,213 878,186

ուղղակի՝ վրաց ազնուականութիւնը կամ ֆէղալական էլեմենտը գերազանցում է հայ նոյն սօցիալական դասից մօտ 8 անգամ, ապա հայ բիւրգերական տարրը—արդիւնաբերական-առևտրական շերտերը—գերազանցում են վրացականից մօտ երեք անգամ:

Մենք նոյն եղրակացութեան կը յանգենք, եթէ համեմատենք իրար հետ հայ և վրացի պրօֆեսիօնալ—հիմնական զբաղմունքների—կազմերը:

Հայերի և վրացիների պրօֆեսիօնալ կազմը.

Գիւղատնակառութիւն (ինքնուգոյն)	Արդիւնա- Առևտ. և հա-
բերութիւն (երկրագ. ժող.)	բորբակց.
Հայեր	71,85 ⁰ / ₀
Վ.րացիք	71,27 ⁰ / ₀
	19,06 ⁰ / ₀
	13,30 ⁰ / ₀
	8,25 ⁰ / ₀
	6,43 ⁰ / ₀

Արշագիւղական անուանվածք	Պոլորդի հայ ինքնուրոյնների (այսինքն որևէ զբաղմունք կամ պրօֆէսիա ունեցող ների) միայն 47,85 ⁰ / ₀ , նոյնիսկ ոչ կէսն է զբաղվում գիւղատնակառութեամբ. իսկ այս պէս անուանված երկրագործ ժողովուրդը (դա նշանակում է ինքնորոյններ և ընտանիքի անդամներ, ասել է՝ գիւղատնակառութեամբ զբաղվողների և գիւղատնակառութեան հաշվին ապրողների կատեգորիաները միասին վերցրած) կազմում է հայերի մէջ 71,27 ⁰ / ₀ , նոյն հատուածները վրացիների մէջ հաւասար են 66,14 ⁰ / ₀ և 82,47 ⁰ / ₀ -ի. այսինքն առաջին դէպքում 18,29 ⁰ / ₀ -ով, իսկ երկրորդ դէպքում 11,20 ⁰ / ₀ -ով աւելի հայե-
-------------------------	--

րից։ Արդիւնաբերութեան և առևտըի—այդ գուտ քաղաքային պրօֆեսիաների —մէջ գտնութ ենք հակառակ յարաբերութիւնը. հայերի մէջ՝ 19,06⁰/₀ և 13,30⁰/₀ ինքնուրոյններ, իսկ վրացիների մէջ՝ 8,25⁰/₀ և 6,43⁰/₀. հայերը աւելի են՝ 10,81⁰/₀ և 6,87⁰/₀-ով վրացիներից։

Ուրեմն երկու ազգերի պրօֆեսիօնալ կազմը՝ իր բաղադրիչ մասնիկներով՝ գալիս ու հաստատում է նրանց հասարակական կազմի ճշգութիւնը. մէկը լրացնում է միւսին նոյն ուղղութեամբ։

Ի՞նչ են ասում մեզ այս շօշափելի տուեալ-ները։

Անշուշտ շատ բան։

Մեր առաջ պարզվում են հասարակական ստրուկտուրաներ միանգամայն հիմնական տարբերութիւններով։ Մի ազգի կամ ժողովրդի հասարակական ստրուկտուրայի ամենաբնօրոշ կողմը՝ նրա տիպը որոշելու համար՝ կազմում է նրա մէջ տիրապետող սօցիալական դասակարգի՝ որպէս տնտեսական կատեգորիայի՝ էռթիւնը։

Արդ, վրացիների և հայերի հասարակական և պրօֆիսիօնալ կազմը ցոյց է տալիս մեզ կօնկրետ փաստերով, որ վրացի և հայ սօցիալական ստրուկտուրաները պատկանում են տրամադօրէն հակաղիք տիպերի։ Միտեղ (վրաց կեանքում) իշխում է միջնադարեան աւտականութեան վերջին շառաւելը և տոն, ուղղութիւն տալիս իր ազգային-հասարակական կեանքի բոլոր գործերին, մտա-

Նորկուլտուրական հարցերի լուծման ու դասաւորութեան ընթացքին: Միւս տեղ (հայերի մէջ) ճիշդ նոյն տիրական դերը խաղում է նոր կաղապարված և դիրքեր գրաւած քաղաքացիական տարրը (քաղաքային բուրժուազիան), այսպէս՝ անուանված ռերսորդ դասը), միացած իր ազգային հագուստականութեան զեկավար ներկայացուցիչների հետ: Միակ նման գիծը, որ մօտեցնում է երկու դասակարգերին՝ վրաց ֆէոդալականութեան և հայ բուրժուազիային, այն է, որ նրանք երկուսն էլ տիրապետող տարրեր են իրանց ազգային-հասարակական կենսքում, թէև նրանց տիրապետութեան արտայայտութիւնների ձեւերի մէջ կան անուրանալի նիւանսներ:

Սակայն ամենահիմնական տարբերութիւնը, որ անհաջողելիորէն զատում և հեռացնում է իրարից այդ տիրապետող դասակարգերին, պէտք է որոնել արդիւնաբերածերի և տնտեսակարգերի հիմքում, որոնց դասակարգային ներկայացուցիչները հանդիսանում են վրացական ազնուականութիւնը և հայկական բուրժուազիան: Առաջինը կազմում է ներկայացուցիչը հին արդիւնաբերածերի՝ իր պրիմիտիվ-նահապետական տեխնիկայով, նա կը իւ ոյժն է ագրիկուլտուրայի, նատուրալ տնտեսութեան: Երկրորդը կազմում է ներկայացուցիչը նորագոյն արդիւնաբերածերի՝ իր կատարելագործված տեխնիկական ինդուստրիայով. նա կը իւ ոյժն է քաղաքային-կապիտալիստական

1830 - 2002
9489


կուլտուրայի, փողային-ապրանքային անտեսութեան:

Ահա ինչ խոր անջրակետ է բաժանում իշրարից վրացի և հայ տիրապետող սիւներին:

Հայ-վրացական անտագօնիզմի այն բոլոր ձևերն ու դէպերը, որոնք արտայայտվում են հասարակական, քաղաքացիական, պետական եւ կրթական գործերում՝ երկուստեք շփումների ժամանակ, այդ բոլորի հակամարտ սաղմերը պէտք է որոնել այն հակաղիք տեխնիկական մեթօդների մէջ, որոնք հիմք են կազմում վրաց կալուածատիրական և հայ կապիտալիստական կատեգորիաների հակամարտ էկոնոմիկաների:

Նատուրալ տնտեսութեան հին, վերակեաց ձևերը և կապիտալիստական տեխնիկան անկարող են տևապէս հաշտ ու խաղաղ համակերպ գոյութիւն պահպանել: Անկախ մարդկային արուեստական միջոցներից՝ մէկի ընթացքը խոչընդոտելու, միւսինը նպաստելու ուղղութեամբ, ինքը՝ տնտեսական էվոլյուցիայի համազօր օրէնքը պիտի պասկէ իր յաղթական միսսիան նաև մեր յետամնաց երկրում, նման այն քաղաքակիրթ երկիրների, ուր տնտեսական մրցութեան այդ կուիլ վաղուց է գտիլ իր վախճանական ճակատագիրը:

Յաջորդ հարցը, որին մենք այժմ պիտի անցնենք, կազմում է այն, թէ ինչ ակներեւ տեխնիկաներ են ակատվում վրացական և հայկական տիրապետող դասակարգերի գոյութեան պայմանների մէջ, ամենից առաջ՝



իբրև տնտեսական կատեգօրիաներից Մենք
թոռւցիկ շտրիխներով ուրուազնեցինք
նրանց կայան վիճակը, ստատիկ դրութիւնը.
տեսնենք այժմ, թէ ինչ օրգանական փոփո-
խութիւններ, ինչ շարժիչ մղումներ են տե-
ղի ունենում նրանց սօցիալ-տնտեսական
կեանքի իրական յարաբերութիւնների մէջ:



III

Վրաց ազնուականութեան մէջ նկատվում
են դասային ըէակցիայի երկու շեշտակի
ուղղութիւններ, որոնք զգալի արագութեամբ
առաջ են ընթանում մերձաւոր հարեան-
ցիութեամբ:

Առաջին՝ աւելի վաղ սկսված՝ ուղղու-
թիւնը նկատվում է ազնուական դասի ստո-
րին շերտերում։ Դա այսպէս կոչված պրօ-
լետարականացման անողոք պրօցեսն է
նրանց մէջ։ Նրանք վերածվում են արագո-
րէն հասարակ երկրագործ զիւղացիութեան,
արհեստաւորութեան, մանր առևտրականու-
թեան, բանւորութեան և հազար ու մի ստո-
րին պրօֆեսիաների քաղաքային բնաւորու-
թեամբ։ Անշուշտ ազնուականութեան այդ
կազմալուծվող մասնիկները պահպանում
են տակաւին անվթար իրանց դասային ի-
րաւունքներն ու աւանդական արտօնու-
թիւնները։ Սակայն դրանք սոսկ ֆիկտիվ
նշանակութիւն ունեն՝ տնտեսական տիրա-
պետութեան նեցուկները կորցրած դասի
համար։ Պրօլետարականացման այդ պրօցե-
սը նոյնքան անողոք է, որքան և անհան-
ջելի, և ունի բնական տենդենց՝ աւելի ա-

բագ ու խոշոր չափերով աճելու։ Անզօր են բոլոր արուեստական խոչընդունելու Կարելի է միայն՝ զանազան պալիասիվ միջոցներով՝ ժամանակաւրապէս դանդաղեցնել այդ պրօցեսը, բայց ոչ երբէք փոխել, յետ կասեցնել կամ դադար տալ նրա առաջընթաց ուղղութեան։

Միւս ուղղութիւնը նկատվու՞ է բարձր ազնուականութեան կամ իշխանական տիտղոսներով օժտված վերին շերտի մէջ։ Տընտեսական և սօցիալական տեսակէտից հետաքրքրական է աւելի այդ ուղղութիւնը— աւտականութեան վերին խաւերում կատարվող փոփոխութիւնների և փոխակերպումների բնաւորութիւնը։

Ո՞րն է այդ շելտի տնտեսական գիրքը։ Նա կազմում է խոշոր կալուածատիրական կատեկօրիան կամ ազրարային արիստօկրատիան վրաց իրականութեան մէջ։

Ո՞րն է նրա սօցիալական տեղն ու դերը։ Նա համարվում է տիրապետող դասակարգը վրաց ժողովրդի մէջ։ Նրան է պատկանում առաջին խօսքը և վճռական ազգեցութիւնը վրաց ազգային-հասարակական կեանքի հարցերի լուծման և գործերի գասաւորութեան մէջ։

Տնտեսական յարաբերութիւնների բնչ կարգի փոփոխութեան է ենթակայ կալուածատէր ողնուականութիւնը։

Ազրարային արիստօկրատիան գտնվում է մի կողմից գրամական անքաւարար եկամուտի և միւս կողմից բարդացած պա-

հանջների խրօնիքական կրիզիսի մէջ։ Նատուրալ տնտեսութիւնը՝ իր երկրագործական հիմն սրիմիտիվ ձևերով՝ չի տալիս նըրան այլ ևս այն դրամական կանխիկ հասոյթը, ինչպիսին պահանջում է նրանից նորագոյն քաղաքային կուլտուրան՝ իր փողային տնտեսութեան շուայլ ծախսերով։ Ազնուածանութեան դրամական պահանջները աւելի արագ ու բազմակողմանիորէն են աճել, քան հողագործութեան մետօնների առաջադիմութիւնը կամ գիւղատնտեսական արդիւնքների գների բարձրացուելը մեր շուկաներում։ Ահա ինչով է պայմանաւորված խոշոր կազուածատիրական կրիզիսը մեր երկրում։

Վրաց ազնուականութեան ռկողակիցն դասը մի այլ երկրում, օրինակ գերմանական իւնկերթումը, չունի նմանօրինակ կրիզիս։ նախ այն պատճառով, որովհետև այնտեղ գիւղատնտեսական տեխնիկայի բարձրաստիճան կատարելագործութիւնը զարգացրել է հողի շահագործութիւնը համապատասխան ինտենգիվ չափերով, երկրորդ՝ որովհետև այնտեղ գիւղատնտեսական արդիւնքների գնահատման նօրմանները՝ շնորհիւ պետութեան վարած ագրարային քաղաքականութեան (բարդացած մաքսային տարիֆի)։ Խիստ բարձր են։ Այլպիսով գերմանական իւնկերները՝ մնալով հանդերձ խոշոր կալուածատէրեր՝ տիրապետում են երկրագործական արդիւնքների շուկաներին և խոշոր դրամներ շահում։

Այլ է արդէն, ինչպէս շեշտեցինք, մեր

երկրի կալուածատէր ազնուականութեան
տնտեսական վիճակը Ներկայ հետզհետէ
և բրոպականացող (ի հարկէ ամենից առաջ
մակերեսութային և բացասական կողթերով)
կենցաղը, բարձրակարգ նիստ ու կացը,
կուլտուրական բաւականութիւնների և հա-
ճայքների խստապահանջ ճաշակը աւելի ա-
րագ են աճել ու բարդացել, քան այն բա-
րեփոխութիւնները, որոնք կարող էին ա-
ռատացնել նրա եկամտային աղբերները
գիւղատնեսութեան սահմաններում:

Այդօրինակ տագնապի ենթակայ կալուա-
ծատէրերը անխուսափելիօրէն կանգնում են
անանկութեան անդունդի ծայրին: Նրանց
համար ուրիշ փրկութիւն չը կայ այլ ես,
բայց եթէ զտնել կանչիկ դրամի առա-
տահոս աղբիւր ինչ զնով ուզում է լինի:
Նրանք դիմում են սկզբում սովորաբար հո-
ղային բանկի «օգնութեան»: Բայց բան-
կային տոկոսների յետագայ բարդացումը
ստեղծում է անանկացող ազնուականների
համար նոր, գուցէ աւելի վտանգաւոր ճշգ-
նաժամ, առանց «իւղելու» նրանց կլորիկ
կումարներով: «Փրկութեան» վերջին «ինս-
տանցիան», որին հարկադրված դիմում է
անձարակ ագրարը, դա խոշոր կապիտա-
վոսի փողային մնդուկն է. դա այն վա-
ճառման ակտն է, որով կալուածատէրը
ծախելով կապիտալիստին իր հողային սե-
փականութիւնը՝ փոխարկվում և դառնում
է սոսկ կրատրական մի ընտիեր, իսկ
նրա մրցակիցը (կապիտալիստը) ամրաց-

նում է իր տնտեսական դրական դիրքը մի
յաւելեալ նեցուկով ևս. նա կապիտալիստ
էր առաջ, այժմ դառնում է ե՛ կալուա-
ծատէր:

Այսպէս, ազնուականի տնտեսական դիրքի
փոփոխութիւնը բնանհրաժեշտօրէն պայմա-
նաւորում է նաև նրա սօցիալական դերի
փոփոխութեան հնարատրութիւնը: Եթէ
ազնուականը դադարում է կալուածատէր
լինելուց, նշանակում է՝ նա կորցնում է իր
ազգայինհասարակական, ինչպէս և պետա-
կանքաղաքացիական կեանքում այն բոլոր
նեցուկները, որոնց վրա նա կրթնեցնում էր
իր դասակարգային ոյժը, իր հասարակա-
կան ազգեցութիւնը, իբրև կալուածատիրա-
կան կաթեգօրիայի անբաժան մասնիկ: Զբ
որ մի առաջին կարգի երկրագործական
երկրում սօցիալական տիրապետութեան բո-
լոր դիրքերը պատկանում են խոշոր կա-
լուածատիրութեան ներկայացուցիչներին:
Հնկար հողային սեփականութեան այդ բարձ-
րութիւնից անդառնալիօրէն, ապա ուրեմն
պիտի կորցնես քո տիրապետութեան յենա-
րանը ևս ամենից առաջ երկրագործ ժո-
ղովրդի մէջ:

Բայց այդ գեռ բաւական չէ:

Եթէ իր կալուածները վաճառող ազնուա-
կանը փոխարինէր այդ կորուսը մի այլ
առարկայական էքփիվալեներով՝ հասարա-
կական իրական արժէքներով, ապա նրա
հողային սեփականալը կութեան հարուածը
այնքան խոշոր չէր լինի, ինչպէս է իրա-

պէս Ուրիշ խօսքերով. եթէ ազնուականը դաղարելով կալուածատէր լինելուց՝ դառնար կապիտալիստ՝ արդիւնաբերութեան սահմանում (ինդուստրիալիստ), կամ առեւրի մէջ (առևտրական ձեռնարկու) և կամ վերջապէս ֆինանսական օպերացիաների շրջանում (բանկային ֆինանսիստ), ապա դրանով չէր կորցնի նա իր տնտեսական շահագործութեան և սօցիալական տիրապետութեան նեցուկը անդարձ, այլ մէկը կը փոխարինէր միւսով։ Նա առաջ ագրար էր, այժմ կը դառնար կապիտալիստ։ Առաջ մասնիկն էր նա խոշոր կալուածատիրական կաթեգօրիայի, այժմ կը դառնար քաղաքային բուրժուազիստ մասնիկը։

Բայց այդպիսի էվոլյուցիոնական պրօցես չենք գտնում սովորաբար իշխանական ընկոնող ազնուականութեան շարքերում։ Կալուածները վաճառելու վտանգին ենթակայ ագրարները փառք են տալիս Աստուծուն, որ ստացած մեծ գումարներով կարող են աղատվել մինչև կոկորդը հասած պարտքերից, իսկ մնացած դրամով ապրել, որպէս մասնաւոր բնատիեր։ Իսկ վերջինս մի կրաւորական, գրեթէ նշանակազուրկ անհատ է հասարակական կեանքում, համարեա այնպէս, ինչպէս կենսաթոշակ ստացող մի պաշտօնաթող չինօվնիկ։ Հողավաճառ ազնուականը չի գործադրում իր ստացած խոշոր դրամագլուխը որպէս արտադրական (պրօդուկտիվ) կապիտալ, այլ գործ է ածում (ծախսում է), որպէս սպառողա-

կան կամ ֆինանսական կապիտալ։ Նա այլևս ոչ կալուածատէր է և ոչ կապիտալիստ։ Ոչ ազրարային արիստոկրատ է և ոչ քաղաքային բորժուած—գաղափարներ իրանց արդիւնաբերական-դասակարգային իմաստով։ Նա սոսկ վայելում է իր հողային սեփականազրկութեան գնով ձեռք բերած գումարները։ Նա ապրում է իր կեանքի արևի վերջին աղօտ շողերը...

Ահա որտեղ է թագնված ամբողջ երեսյթի վիրաւոր կէտը։



IV

Այսպէս ուրեմն մի կողմից, ինչպէս մենք
տեսանք, կազմալուծվում և վեր են մաղ-
վում վրաց ազնուական դասի ստորին շեր-
տերը՝ մինչ պրօիետարականնալու աստի-
ճան, իսկ միւս կողմից մասնկանում և ընկ-
նում է իր տիրական գիրքերից նոյն դասի
վերին խաւը՝ իշխանական-տիտղոսաւոր հա-
տուածու:

Դասային բէակցիայի այդ երկու ռւզրութիւնները հեռանում են իրարից միայն նրանով, որ նրանց ներկայացուցիչ հաստուածները տարբերվում են միմեանցից լոկ իրանց կենցաղավարութեամբ, նիւթական բարեկեցութեան մակարդակով, այսինքն անտեսական վիճակով և, հետեւապէս, սօցիալական դրութեամբ:

Մի շատ էական կէտում, սակայն, նրանք
մօտենում են իրար: Երկուսն էլ՝ պրօլետա-
րականացող և սնանկացող հատուածները՝
անհետ կորցրել են իրանց գասակարգա-
յին կարևորագոյն յատկանիշը. նրանք կորց-
րել են իրանց հողային սեփականութեան
իրաւունքը իբրև կարւածատիրական կա-
տեգորիա և՝ դրա հետ միասին՝ տանուլ
առուել իրանց սօցիալական տիրապետութեան

ամուռ հիմքերը, Փունդամենտը: Նրանք երկուսն էլ հաւասարապէս ենթակայ են դասակարգային մահացման անխուսափելի պրօցեսին: Նրանք, միջնադարեան աւատականութեան այդ վերջին քայլայվող շառաւիդը, «զոհերն» են կապիտալիստական արդիւնաբերութեան այն սիստեմի, որը իր տնտեսական յեղաշրջումների առաջադիմական միստիան յաղթանակով պսակելու համար՝ պէտք է ճինը խորուակէ նորը կառուցանելու համար. պէտք է անհրաժեշտ զոհեր պատճառէ հնաւանդ կոթողների մէջ՝ նորագոյն կուլտուրայի հոյակապ ամրոցները կառուցանելու համար: Վրացական, ինչպէս և թուրք-թաթարական, ուռւսական և հայկական ազնուականութիւնը, իբրև կալուածատիրական կատեզօրիայի զատողատ գրուպպաներ, տեղի են աալիս խոշոր կապիտալի սրարշաւ նուռաճումների առաջ գէպի գաւառները: Ոչ մի մարդկային արուեստական զսպանակ չի կարող ետ մզել վերջինը, հիտեապէս ոչ մի «աստուածային հրաշք» չի կարող փրկել առաջինը: Մէկը թէ միւսը, այն է՝ ֆէոդալական տնտեսակարգի անկումը կապիտալիստական արդիւնաբերակարգի (տեխնիկական ինդուստրիայի) անբուժելի հարուածներից, ոչ այլ ինչ է, բայց եթէ տնտեսական էվոլյուցիայի մեծ ու համազօր օրէնքներից մէկը, նոյնքան ներգործական ու անփոփոխելի, որքան ընութեան ամեն մի օրէնք:

Բայց տնտեսական էվոլյուցիայի նոյն ան-

խնայ ներգործումները արտայայտվում են նաև քաղաքային կուլտուրայի շրջանակներում։ Դա խոշոր արդիւնաբերութեան հարուսածիչ մրցութիւնն է ձեռնարհեստի դէմ և խոշոր առևտրինը՝ մանրավաճառութեան դէմ։

Այստեղ ես նախանձելի չէ վրացական համապատասխան տարրերի վիճակը։ Խոշոր ձեռնարկուներ՝ արդիւնաբերութեան, առևտրի կամ բանկային ֆինանսների և ահմաններում՝ հազուագիւտ փաստեր են վրացական կեանքում։ Նոր կաղապարված քաղաքացիական մի շերտ, նոյնիսկ մի համեստ գրուպպա, պատմական «երրորդ դասի» բարգաւաճ շառաւիդ, բացակայում է վրաց ազգային էրականութեան մէջ։ Եւ չունի այդ իրականութիւնը հաւանական շանսեր՝ երբեկցէ արտաքերել կարողանալու իր ծոցում նորագոյն բուրժուազիայի այդ հիմնական կողմիզը։ Մանր առևտրականութիւնից, արհեստաւորութիւնից և նոյնիսկ գիւղացիութիւնից կարող են ժամանակի ընթացքում մասնակի անհատներ վեր բարձրանալ իրանց վիճակից, ճիշդ այնպէս, ինչպէս երբեմն երբեմն «բաղդը ժպտում» է այս ու այն բանւորին կապիտալիստ դառնալը։

Սակայն մի սոխակով գարուն չի լինում։ Մասնակի անհատներով դասակարգ չի գոյանայ։

Վրաց ազգային իրականութիւնը արդէն շատ է ուշացնել՝ ինքնուրոյն ոյժերով տըն-

տեսական վերաճնութեան այդ նորագոյն ֆազը ապրելու համար։ Նա ինքնանկախ և ինքնապարփակ չէ՝ այդ ուղղութեամբ նոյնիսկ փորձեր անելու համար։ Նա համառուսական իրականութեան ամուր շաղկապված ծայրերկիրն է։ Համակովկասեան իրականութեան մի սերտ, անգաժան մասնիկն է։ որպէս այդպիսին, նա պիտի ճակատագրօրէն կրէ իր վրա համապարփակ իրականութեան բազմածալ փեշերում դասաւորվող յարաբերութիւնների անխուսափելի կնիքը։

Համառուսական իրականութեան առանձնայատուկ կողմերից մէկը՝ նիւթեական կուլտուրայի բնագաւառում՝ եղել է այն, որ նրա տնտեսական զարգացման նոր ու նորագոյն ֆազերը կրել են զաղութային բընաւորութիւնն կապիտալիստական Ռուսիան պարտական է, որպէս այդպիսին, արտասահմանեան էլեմենտի—տեխնիկայի, կապիտալի, ձեռներէց և ծառայող պերսոնալի—դրական մասնակցութեան՝ իր նոր դարեան զարգացման ամենավճռական շրջաններում։

Եւ ինչպէս պետութեան արևմուտքում, հիւսիսում, կենտրօնում և հարաւոր դարերից ի վեր, այնպէս էլ կովկասում վերջին տասնամեակներում՝ արևմտահերօպական ձեռնարկու գործունէութիւնը գրաւել է և շարունակում է անդադար գրաւել ամուր գիրքեր արդիւնաբերութեան (ինդուստրիայի), լեռնագործութեան և հաղորդակ-

ցութեան շատ կարնոր սահմաններում: Ոչ
տեղական շուկայի կապիտալի բեզերվը, ոչ
տեխնիկայի դրութիւնը և ոչ ձեռնարկու ու
գի՞ն՝ տեղական ոյժերի մէջ՝ անկարող հն
բաւարարութիւն տալ արդիւնաբերական ոյ-
ժերի գարգացման պահանջներին՝ առանց
արտասահմանեան տարրերի մասնակցու-
թեան:

Այդ պատճառով եւրօպական խոշոր կա-
պիտալի ներժուծումը, դրա հետ միասին
նաև կապիտալի մագնասների մուտքը դար-
ձել է մեր երկրի տնտեսական վերածնու-
թեան համար մի բնական անհրաժեշտու-
թիւն: Ոչ միայն տնտեսական նոր աղբիւր-
ների շահագործութեամբ, այլև գնելով՝ ար-
դէն գոյութիւն ունեցող բազմաթիւ ձեռ-
նարկութիւններ տեղական տէրերից, ար-
տասահմանեան կապիտալիստները սկսել են
խոշոր գեր խաղալ կովկասեան ժողովրդա-
տնտեսութեան մէջ: Եվեղական և անզլիա-
կան կապիտալը նաւթային հոչակաւոր ար-
դիւնաբերութեան մէջ, ֆրանսիական կա-
պիտալը լեռնագործական ձեռնարկութիւն-
ների և բելգիականը հաղորդակցութեան
մէջ հասել են արդէն այնպիսի պատկառե-
լի ծաւալման ու բարձրութեան, որ որոշ
տեղերում տեղական տարրը յետ է մզվում
զգալի կերպով: Արտասահմանեան այդ գրուպ-
պաների, վերջերս նաև ամերիկացիների և
մանաւանդ գերմանացիների *) կողմից եղած

*) 1913 թ. Դերմանիայում հիմնվել է «Deutsche Gesellschaft zum Studium Russlands» («Գերմա-

բազմաթիւ ուսումնասիրական և հետազօ-
տական էքսպեդիցիաները դէպի կովկաս՝
բաց են անում մեր առաջ միջազգային կա-
պիտալի ներհոստան փայլուն շրջանի պերս-
պեկտիվներ:

Արտասահմանեան կապիտալի արշաւին
զուգակցում է ուսուական կապիտալը պե-
տութեան զանազան մասերից: Ճիշդ է,
վերջնիս բռնած զիրքն ու ծաւալը գեռ հա-
մեստ է, բայց նա ունի տեսնդենց աւելի ու
աւելի աճելու կովկասում, մանաւանդ ակ-
ցիօներական ընկերութիւնների միջազգով:

Իսկ տեղական ժողովուրդների մէջ եթէ
կայ մի տարրը, որ համեմատաբար բաւական
պատկառելի մամնակցութիւն ունի մեր
երկրի արդիւնաբերական ոյժերի գարգաց-
ման մէջ, դրանք հայերն են: Մի կողմից
գեռ վաղուց կուտակված հայկական առե-
տրական կապիտալը, միւս կողմից նորա-
գոյն արդիւնաբերական ձեռնարկութիւննե-
րը դրաւել են մեր երկրի ժողովրդատե-
սութեան մէջ մի տեղ հայերի համար, ու
րին հաւասարվել կամ որի հետ մրցել չէ

նական ընկերութիւն Ռուսաստանը ուսումնասիրելու
համար») անոնով մի ընկերութիւն (կենտրոնը Բերլի-
նում), որին մասնակցում են շատ յայտնի գիտական-
ներ և բարգավիճ ներկայացուցիչներ կառավարութիւ-
նից ու ֆինանսական աշխարհից: Ընկերութիւնը նպա-
տակ ունի ամենից առաջ նուսաստանի տնտեսական
կեանքը ուսումնասիրելու: Առանձին ուշադիր դարձվութիւն
դարձվելու է բնական հարստութիւններով լի Կովկա-
սի վրա:

կարող համապատասխան տարրը կովկասեան
որևէ ժողովրդի մէջ:

Դրուածքիս երկրորդ մասում տեսանք
մենք արդէն առձեռն վիճակագրական շօ~
շափելի փաստերի, թէ որքան գերակշռում
է (կովկասեան միւս ժողովուրդներին) հա~
յերի յարաբերական մասնակցութիւնը քա~
ղաքացիական դասի մէջ և որքան մեծ է
նրանց ժուտքը արդիւնաբերութեան, առեւ~
տրի և առհասարակ քաղաքային բնաւորու~
թիւն ունեցող պրօֆեսիաների մէջ: Եթէ չը
մոռանանք այն հանդամանքը, որ այդ տոկոս~
ները կազմվել են ըստ 1897 թւականի ա~
ռաջին ընդհանուր ժողովրդագրութեան
տուեալների (այնուհետև չեն եղել տուեալ~
ներ պրօֆեսիաների վերաբերեալ), այն ժա~
մանակ պարզ կը լինի, թէ այդ ժամանա~
կից ի վեր որքան աւելի լայն չափերով
տեղի ունեցած կը լինի հասարակական շեր~
տաւորումը հայ ժողովրդի մէջ, որքան ա~
ճած կը լինի քաղաքացիական տարրը՝ ի
հաշիւ գիւղացիականի՝ և որքան բարձրա~
ցած կը լինի հայերի մասնակցութիւնը ար~
դիւնաբերութեան, առեւտրի և այլ քաղա~
քային պրօֆեսիաների մէջ: Զի՞ որ վերջին
17 տարվայ ընթացքում գաւառական տար~
բերի արտագաղթը դէպի մեծ քաղաք~
ները և մեր երկրի տնտեսական զարգաց~
ման արագութիւնը աւելի մեծ է եղել, քան
գուցէ 19-րդ դարի ամբողջ երկրորդ կի~
սում:

Հայ ժողովուրդը կովկասում առաջինն է, որ

գտնվում է՝ ամենից առաջ ըստ նրա ինքնու~
րոյն կոչումատրների կամ ակտիվ գրադ~
վողների թւական յարաբերութեան՝ տնտե~
սական զարգացման անցման շղջանում՝ գիւ~
ղատնտեսութիւնից արդիւնաբերութեան և
առևտրին: Նա աւելի քան որևէ այլ ժողովուրդ
ոյժեր է մատակարարում մեր երկրի տնտե~
սակարգի արդիւնաբերականացման (ին~
դուստրիալիզացիայի) և առեւտրականաց~
ման (կօմերսիալիզացիայի) պրօցեսին: Այդ
է պատճառը որ հայերի մէջ ծաղկում են
արագ քայլերով քաղաքային տարրերը նու~
րագոյն քաղաքացիութեան՝ գերրորդ դա~
սի՝ բազմակողանիօրէն կաղապարվող մար~
մինը: Այդ փարթամօրէն ծաւալվող քաղա~
քացիութիւնից վեր է բարձրանում կապի~
տալիստական դասակարգը՝ հայկական բուր~
ժուազիան՝ իր արդիւնաբերական, առեւ~
տրական և ֆինանսական հատուածներով:
Այդ դասակարգը խաղում է տնտեսապէս
առաջնորդող վեր առհասարակ կովկասում,
մանաւանդ Անդրկովկասում, բոլոր ժողո~
վուրդների մէջ, իսկ մտաւորակուլտուրապէս
տիրում է նա հայ ժողովրդի ողջ ազգային
հասարակական կեանքին: Տեղական ժողո~
վուրդների մէջ զանում ենք տնտեսական
բացիօնալիզմի համեմատաբար լայն հիմքերի
վրա զարգացած կապիտալիստական դասա~
կարգ միմիայն հայերի մէջ: Անշուշտ հայ բուր~
ժուազիան ևս, իր հերթին, գտնվում է իր
համար քաւական աննպաստ զսպանակների
մէջ: Նրան ճնշումն է սպառնում մի կողմից

ոռւսական, միւս կողմից և ամենից առաջ՝
արտասահմանեան կապիտալը։ Այնու ամե-
նայնիւ հայ կապիտալիստները կարո-
ղանում են՝ իրանցից աւելի ուժեղի հան-
դէպ՝ որոշ սահմանափակ կէտերում պահ-
պանել իրանց դիրքերը։

Այսպէս ուրեմն հայկական, ոռւսական և
արտասահմանեան կապիտալը կազմում է
այն գերիշխելու կոչված հզօր զործոնը մեր
ժողովրդանտեսութեան մէջ, որ մի կող-
մից մահացու մրցութեան մէջ մտնելով
վրացական և թուրք-թաթարական ագրա-
յին ազնուականութեան հետ՝ միւս կող-
մից փաստական հնարաւորութիւն չէ տա-
լիս տեղական ժողովուրդների (ի թիւս դը-
րանց և վրացիների) մանր քաղաքացիու-
թեան՝ վեր բարձրանալ իր ճնշված վիճա-
կից և տնտեսական կուի մէջ ամուր յե-
նարաններ ստեղծել իր համար։

Այս կէտում արդէն վրաց ազնուականու-
թեան դասային ըէակցիային—նրա պրօեւ-
տարակացման և սնանկացման աննահանչ
հոսանքին—միանում է, որպէս որակով յա-
րակից մօմենտ, վրաց մանրս բուրժուազիա-
յի (մանր քաղաքացիութեան) անվախճան
ընկճված վիճակը։ Մէկը թէ միւսը անհրա-
ժեշտ «զոհիներն» են խոշոր կապիտալի։

Ահա ինչն է խորացնում վրաց իրակա-
նութեան «վիրաւոր» ճեղքուածքը։



V

Ի՞նչպէս է վերաբերվում վրաց հասարա-
կական ինտելիգենցիան դէպի գոյութիւն
ունեցող երկոյթի առաջընթաց պրօցեսը։
Ո՞ր կէտից է սկսում նա իր քննադատա-
կանը։

Սկզբից և եթ շեշտենք, որպէս մեր յե-
տագայ հիմնաւորումների և զիտողութիւն-
ների թէօրիական բաղիս, որ մի ընկ-
նող դասակարգի (ինչպէս և ընկնող
աղգի) իդէօլոգիան չի կարող լինել առողջ
ու տրամաբանական։ Ընկնող ոչ այն իմաս-
տով, որ տուեալ դասակարգին (կամ ազ-
գին) ճնշում են բռնի, ձգում են գետնին
արուեստական, արգելառիթ միջոցներով։
Ի հարկէ անկման այդ մեթօգի մասին խօսք
լինել չի կարող։ Այլ ընկնող այն իմաստով,
որ տուեալ դասակարգը (կամ ազգը)
հասարակական յարաբերութիւնների զար-
գացման ընական պրօցեսում կորցնում է
իր գոյութեան կենսունակութիւնը և մրցու-
թեան բռնվելով մի աւելի նոր, թարմ,
ուժեղ, կենսունակ դասակարգի հետ՝ բնա-
կան անհրաժեշտութեամբ տեղի է տալիս
նրան իր տիրապետութեան դիրքերը։

Այդ պատմական երկոյթը—մի դասակար-

գի անկում միւսի բարձրացման գնով—այլ
բան չէ, բայց եթէ հասարակական օրգա-
նիզմի կուլտուրական շարժում, նրա առա-
ջադիմութեան բնական պահանջ։ Բացասա-
բար որակել վեր ձգող դասակարգի սո-
ցիալական բնոյթը և փորձեր անել նրա ա-
ռաջիսաղցութիւնը խոչընդոտելու՝ նշանա-
կում է ծեղք բարձրացնել տուեալ ժամա-
նակի կովուրական զարգացման պրօ-
ցեսի դէմ։ Նշանակում է գործել հականա-
սարակական, հակակովուրական և հա-
կապատմական քայլ։ Ուրիշ խօսքով՝ նշա-
նակում է չը դատել առողջ ու տրամաբա-
նօրէն և դաւանել ըէակցիօնէր իդէօլոգիա
առաջին կարգի։

Ոչ միայն ընկնող հին դասակարգի վե-
րաբերմամբ։ Մի իդէօլոգիա ըէակցիօներ է
նաև այն ժամանակ, երբ նա պաշտպանում
է արդիւնաբերական և տնտեսական հին
ձևերի մասր ու ճնշված ներկայացուցիչ-
ներին (մասր քաղաքացիութեան) այնքան,
որքան նրանք ձգտում են իրանգարել տեխ-
նիկայի նոր, բարդ ու կատարելագործված
ձևերի մուտքն ու նոււաճումները՝ իրանց
գերքերը պահպանելու համար։ կամ այն
քան, որքան նրանց շահերի պաշտպան իւ-
դէօլոգիան հակառակում է տեխնիկայի և
կապիտալի ծաւալումներին, որովհետև նը-
րանց կրիչ ոյժերը պատկանում են ուրիշ
ազգութիւնների և ոչ տուեալ իդէօլոգների
ազգութեան։

Այդպիսի մի աննախանձելի դերի մէջ է

գտնվում վրաց հասարակական ինտելիգեն-
ցիայի որոշ մասը։

Նա աւելի քան պարզ աչքերով տեսնում
է իր ազգային իրականութեան մէջ կա-
տարվող սօցիալական փոփոխութիւնները։
Նա նկատում է, թէ ինչպէս հետզհետէ՝ առ-
պահով ընթացքով՝ ընկնում է իրանց իրա-
կանութեան տիրապետող սիւնը՝ առանց
փոխարինելու վրաց պագից դասակարգային
այլ էքվիվալենտի, և թէ ինչպէս նոյն տի-
րական դիրքերը գրաւում են այլազգի սիւ-
ներ։ Ոչ միայն վերինն է ընկնում, այլ և
ստորինը չի կարողանուած բարձրանալ։ Ոչ
միայն վրաց կալուածատէր ազնուականու-
թիւնը աստիճանաբար զիջում է իր հո-
գային սեփականութիւնը կոպիտալի ներ-
կայացուցիչներին, այլ և վրաց մանր բուր-
ժուազիայից (արհեստի և մանր առևտորի
հատուածներից) չի գոյանում խոշորը։ Ա-
ւելին ասենք. նոյն իսկ նրան՝ մանր բուր-
ժուազիային պրօլետարականացման «վը-
տանգն» է սպառնում օրէցօր։

Կարճ՝ վրաց իրականութիւնը ունի հա-
սարակական յարաբերութիւնների զարգաց-
ման մի շատ շեշտակի անդենց՝ զրկվելու
ապագայում ազգային տիրապետող դասա-
կարգից, իբրև տնտեսական շահագործող
կաթեգորիա։

Իսկ ինչ է անունը այն ինտելիգենցիայի
ըստ իր դաւանած իդէօլոգիայի սօցիալական
բնոյթի, որ ազգային տիրապետող դասա-
կարգի անկման վտանգը յայտարարում է

համազգային շարիթ, իսկ նրա ոչ գոյոււթիւնը՝ համազգային կորուստ ու դժբաղութիւն:

Այդպիսի ինտելիգենցիայի անունն է նացիօնալիստ: Նացիօնալիստ է ամենից առաջ նա, ով իր ազգային կեանքի տիրապետող փոքրամասնութեան շահերի պաշտպանութեան համար պարզում է հրապարակով զասի-ազգային ամբողջութեան շահերի պաշտպանութեան դրօշակը:

Այդ տիպի նացիօնալիստների շարքին է պատկանում մեր հարևան վրացական ինտելիգենցիայի և մս մուլի այն մասը, որը ընկնող ազնուականութեան և ընկճված մանր քաղաքացիութեան շահերի անունով դժբաղութիւնն է գումարում՝ ողջ վրացական ազգի և անհաջող կոիւ յայտարարում մեր երկրի արդիւնաբերական ոյժերի գարգացման խոշորագոյն գործոնների՝ տեխնիկայի և կապիտալի ստեղծագործութիւնների դէմ:

Համոզվենք ասածներիս մէջ վիաստերով:

Մի ուժեղ շեշտաւորված դժգոհութիւն կըրկնվել է անվերջ վրաց մամուլի նացիօնալիստական օրգանների կողմից ընդդէմ հայերի ընդհանրապէս և հայ կապիտալիստների մասնաւորապէս: Այդ դառն դժգոհութեան քուինտէսսենցը հետևեալն է:

Հայերը, իբրև եկւոր տարբեր մեր երկրում, տիրել են մեր մայրաքաղաքին: Նըրանք կենտրօնացրել են իրանց ձեռքը մեր երկրի հարստութիւնները, հետևապէս նաև կուլտուրական արժեքները: Փառահեղ շե-

նութիւնները, տները, արիստօկրատական եւրոպականացած քաղաքամասերը նրանց են պատկանում: Նրանք զաւթել են իրանց ձեռքը խոշոր առևտուրն ու արդիւնաբերութիւնը, որոնց շահագործութից տուժութ են և ընկնում մեր մանր առևտուրականութիւնն ու արհեստաւորութիւնը, մեր քաղաքային ազգաբնակութեան միջին խաւերը: Բայց ամենազգալին ու անբուժելի վիրաւոր կէտը, դա հայկական կապիտալի հետզհետէ ուժեղացող արշաւն է դէպի մեր տերրիտորիայի՝ կենտրօնական վայրերը, դէպի մեր կալուածները, մեր հողային սեփականութիւնները: Վրաց ազնուականները վաճառում են զգալի արագութեամբ իրանց հողամասերը հայ կապիտալիստներին: Իսկ դա նշանակում է ուրիշ խօսքով, որ վրացիները ծախու են հանում իրանց մայրենի երկիրը եկւոր, օտար հայերին: «Վրացիները, գրում է բառացի «Երի» թերթը, կարող են գոյութիւն ունենալ և ապրել միայն՝ իբրև տերրիտորիա, հող ունեցող ազգ, իսկ առանց հողի ապրել չեն կարող»:

Այսպէս են դատել և շարունակում են միշտ այդպէս դատել վրաց յիշածս ուղղութեան պատկանող բոլոր օրգանները, սկսած պահպանողական երբեմնի «իշվերիայից», առաջադիմական «Ճնօքիս Փուրցելից» մինչև ներկայիս ուռւստառ և վրացատառ օրգանները վրացական նացիօնալիզմի՝ «Զակավազի», «Զակավ-

բայց այս այլ պատճենում կազմակերպված է այս գործը:

Չենք ուրանում, անշուշտ, որ կան տարբերութիւններ այդ օրգանների դաւանած և քարոզած անտիհայկական նացիօնալիզմի մէջ: Մենք գիտենք, օրինակ, որ բաւական զգալի է այն տարածութիւնը, որով հեռանում է «Սախալիս Գաղեթին» *) «Յաք. Բիշութից, Սակայն այդ տարբերութիւնը աւելի շուտ տակտիկական է՝ քան սկզբունքային, ծեւական է՝ քան էական: Առաւել կամ պակաս նիւանսներով միանում են նրանք բոլորը մի հիմնական կէտում: Նրանք անտիհայկական նացիօնալիստներ են այնքան, որքան նրանց խորշանքն ու ատելութիւնը, յարձակումներն ու արշաւանքը՝ դէպի գաւառներ ու ըտահոսող հայկական կապիտալի հասցէին՝ ընդհանրացվում և ուղղվում են հայ ժողովրդի հասցէին, որպէս ազգային հատուածի:

Աւելին կասենք: Այսքան, որքան վրաց օրգանները յիշեցնում են հայերին՝ երբեմն

*) Ի պատասխան «Սախալիս Գաղեթի» թերթի (№ 1114) մեր փետրվարի 5-ին կարդացած հրապարակական դասմասնութեան մասին արած նկատողութիւններին՝ կարող ենք հաւասարիացնել նրան, որ մենք շատ լաւ տարբերել գիտենք վրացական ինտելիգենցիայի զանազան հատուածներին իրարից: Մեր խօսքը եղել է միմիայն ըէակցիօնէր իրէօլոգիա դաւանող վրաց նացիօնալիստների մասին: Մենք գիտենք, որ վրացիների մէջ քիչ չէ մտաւոր լայն հօրիզոններ ունեցողների թիւը, որոնք նոյն եռանդով կուռիմ: Են վնասակար և թունաւոր նացիօնալիզմի դէմ:

Նոյնիսկ սպառնական տօնով, որ սրանք եկւոր են և օտար վրացական պատմական հայրենիքում, այնքան նրանք դաւանում և վարդապետում են անտիսեմիտիզմի նման մի բան՝ այն է անտիարմենիզմ: Վրացական նացիօնալիստների անտիարմենիզմի վերջին ֆազը ոչնչով յատ չը մնաց լեհական նացիօնալիստների անտիսեմիտիզմի վերջին տիսուր էջերից լեհաստանում:

Սակայն և այնպէս փորձենք փաստական իրաւացիութեան և առողջ բանականութեան մասշտաբի հնթարկել մեր հակառակորդների գանգատաւոր տողերը: Իրա՞ւ չարիքի ու դժբաղդութեան ննթակայ է վրաց ազգը, կորչում է վրաց հայրենիքը, որ այնքան ալարմ տոնով գուժում են նացիօնալիստները հրապարակով: Իրա՞ւ խոշոր կապիտալը՝ լինի դա հայկական, ոռւսական թէ արտասահմանեան, միևնույն է—պօզիտիվ կուլտուրայի կրիչ ոյժ չէ հանդիսանում վրաստանում, վրացական գիւղացիութեան համար, այլ միայն կեղեգելու և կործանելու կոչումն անի:

Այս հարցերի վերլուծական պատասխանը աւելի կը պարզէ մեզ համազգային դրոշակ պարզած իդէօլոգների իսկական ֆիզիօնօմիան:



VII

Վրաստանը կորչում է եկտոր հայերի զաւթող քաղաքականութեամբ, — ասում են մեղ շարունակ:

Ճշմարիտ, խօսքեր են սրանք, առանց իւմաստի ու բովանդակութեան:

Մենք կարծում ենք, նախ և առաջ, որ Վրաստան, Լեհաստան, Հայաստան, Թուրքեատան և այլն իրապէս միայն պատմական տրադիցիաներով և յիշատակարաններով պարուրված տերրիտորիական միաւորներ են առանց քաղաքական կօնկրետ բովանդակութեան, սոսկ աշխարհագրական կէտեր են մի պետութեան մէջ, ուր բոլոր ժողովուրդները, որպէս էտնօգրաֆիական միութիւններ և ազգային հատուածներ, համախմբված և կողք կողքի տուած միենոյն քաղաքական երկնակամարի տակ, գերազանցապէս շահագրգուված են՝ տնօրինելու իրանց ընդհանուր քաղաքացիական կեանքը, և առաջադիմութեան նօրմալ ուղիներ հարթել՝ նրա ապագայ բարեյաջող զարգացման գրաւականները ապահովելով։ Միթէ գոյութիւն ունի անկախ, ինքնապարփակ Վրաստան, որտեղ բնակվող գաւառացի հայը՝ դարագրացին կամ երևանցին՝ ճանաչվէին օ-

տարներ։ Հայը նոյնքան հարազատ համառուսական քաղաքացի է Թիֆլիսում ու Քութայիսում, որքան վրացին Բազւում ու Գանձակում, որքան թուրքը էջմիածնում և Ալէքսանդրոպոլում, որքան հրէան Վարշավյում և Լոձում, որքան հայը, վրացին, թուրքը, լեհը և այլն Պետերբուրգում և Մօսկվայում։ Բոլորն էլ համազօր և իրաւահաւասար քաղաքացիներ են իրանց գործերով պետութեան մէջ։ Եւ ովէ է այն յանդուգնը, որ «իմ» ու «քո» տերրիտորիական մեռած կէտերի բարձրագոչ յայտարարումներով՝ արգելքի ոոռ possuntus է ուղղում իր համաքաղաքացուն...

Երկրորդ ինչ է նշանակում այն նոյնքան անմիտ մեղադրանքը, որ հայերը զաւթել, նուաճել են ամեն բան վրաց մայրաքաղաքում։ Հայերը, ինչպէս և ոռոսական ու եւրոպական տարրերը տնտեսական հողի վրա՝ մուտք չեն գործել վրացական քաղաքը որպէս վանդալներ՝ տիրելու և յափշտակելու տենչանքով, կամ չեն իրացնում բռնի ուրիշի սեփականութիւնը, այլ տնտեսական խաղաղ մրցութեան բնական պրօցեսով կենտրօնանում են հարստութիւնները ուժեղների ձեռքը։ Այդ նոյնը կը լինէր, եթէ հայերը տրանզային այն բանի դէմ, որ հայ կապիտալիստներից ուանք Բազւում վաճառում են իրանց ձեռնարկութիւնները անգլիացիներին կամ յոյներն ու ֆրանսիացիք դիրքեր են գրաւում այնպիսի հայաբնակ հանքային վայրերում, ինչպէս Զանգեզուրն

է: Այնտեղ, ուր հարկ է ըմբռնել հասարաշ կական երեսի պատճառակցական խոր հիմքերը, դուք տրտնջում էք ու բողոքում սենտիմենտալ բացագանչութիւններով: Ձեր մէջ չէ խօսում շրջանայեաց ըէալիստը, խոհուն տրամաբանը. ձեր մէջ քարոզում է մնչանական նղճիմ մօրալիստը վաղուց արդէն անպէտքացած պատգամներ:

Վերջապէս երրորդ կէտը, որ աւելի էական է՝ վերնաշղպարշված իդէօլօգիայի խարակտերիստիկայի համար, կազմում է հետևեալը: Մասնաւոր կալուածատէրերի հողավաճառութեան փաստը յայտարարվում է բարձրածայն, որպէս վրացական հայրենիքի վաճառք, որպէս ողջ վրաց ազգի կորուստ: Եւ որովհետև մասնաւորի (դասակարգի) շահերի համար շահագործվում է հրապարակով ընդհանրութեան (ողջ ազգութեան) անունն ու գաղափարը,—ինչպէս վարվում են սովորաբար բոլոր երկիրների զուտարիւն նացիօնալիստները,—ուստի վրացական բողոքող ինտելիգենցիան չէ քաշվում հրապարակով ազգային ընդհանրութիւնից արտակարդ զոհաբերութիւններ պահանջելու՝ հողային վաճառումների ռաւերիչ» հոսանքը փակելու համար: Ուշադրութեամբ կարդացէք «էրիք թերթի հետեւեալ գոհարները.

«Թող մեր բոլոր հասարակական հիմնարկութիւնները (թատրօն, գրականութիւն, կըթութիւն, ամբողջ հոգեոր կուլտուրան և այլն),—գրում է յօդուածագիրը խանդավառ պատրիօտի ոգևորութեամբ, —յետ դնեն իւ-

րանց բոլոր կարիքները. բոլոր այն գրամագլուխները, որ այժմ գործ է ածկում հասարակական-կուլտուրական կարիքների վրա, պէտք է գործ ածվի նրա համար, որ վրացի կալուածատէրերի ժառանգները լինեն վրացիներ եւ ոչ որիշ ազգութիւններ: Միայն այն ժամանակ մենք կարող ենք հանգիստ լինել մեր ապագայի մասին...» (ընդգծումները իմո են):

Սակաւ են պատահում դէպքեր, որ մի նացիօնալիստ օրգան այդքան ակներեռւթեամբ վայր առնէ իր դիմակը և ցոյց տայ ամենքին իր հարազատ ֆիզիօնօմիան: Հրապարակով, առանց աւելորդ կօմենտարիաների, սնանկացող ազնուականութեան լէյբ-օրդանը պարզապէս պահանջում է, որ վրաց ժողովուրդը ցիետ դնէ, ասել է: զոհաբերէ իր հասարակական-կուլտուրական հաստատութիւնները և նրանց կարիքներին յատկացված գրամագլուխները ընծայաբերէ խոշոր կալուածատէրերի գրապաններին, որպէսպէս վերջիններս չը վաճառեն իրանց հողերը այլազգի կալիստալիստներին, այլ ժառանգութիւն թողնեն իրանց զաւակներին: Սա արդէն չափազանց է նոյն իսկ ամենադիմակալերծ նացիօնալիկմի համար: Սակայն «էրին» եզակի չէ իր տեսակում: Նման դատողութիւնները խիստ տիպիքական են մեզ ծանօթ օրգանների և նրանց շուրջը խմբված գաղափարակից ինտելիգենցիայի մտածելակերպի համար: Պահանջել ազգից զոհաբերութիւններ՝ յօդուտ տի-

բապետող դասակարգի շահերի, պարզել ազ-
գութեան և հայրենիքի գաղափարների մա-
կագիր դրոշակները ամեն անգամ, երբ
տուժում է բացառապէս տիրապետող դա-
սակարգը. այս է ամենուրեք ելակէտը նա-
ցիօնալիստ իդէօլոգների բոլոր դատողու-
թիւնների և դիտողութիւնների:

Բայց դրանով չի սպառվում հարցը:

Բոլոր տիրապետող դասակարգերի իդէօ-
լոգիանները միօրինակ և միագոյն չեն. հե-
տևապէս ամեն մի նացիօնալիկմ չունի ճիշդ
միկնոյն սօցիալական բնոյթը. Հստ տեղի,
ժամանակի և հասարակական ընդհանուր
ստրուկտուրայի տարրեր են եղել նրանք:

Կայ դասակարգ (խօսքը վերաբերում է
տիրապետութեան ձգտող կամ արդէն տի-
րապետող դասակարգին), որի շահերը և
սօցիալ-պատմական ձգտումները մինչև ու-
րոշ աստիճան եկել, միացել և համերաշ-
խել են ամբողջ ազգի շահերին ու ձգտում-
ներին: Այդպէս է եղել «երրորդ դասի»
խաղացած պատմական դերը Արևմտեան
Եւրոպայում: Նրան էր պատկանում քաղա-
քական յեղաշրջման արդի ւնքները: Բայց
նոյն յեղաշրջումը տապալելով ֆէօդալական
կազմը հին հասարակութեան՝ իրականաց-
րեց իրաւական պետութեան և քաղաքացիա-
կան ազատութիւնների սկզբունքները, իբ-
րև նույրական բարիքներ համայն ազգի
համար: Նշանակում է՝ այդպիսի դասակարգի
նացիօնալիստական իդէօլոգիան իր սօցիա-
լական բնոյթով ազատագրական է, ազա-

տամտական, առաջադիմական և՝ իր լայն,
համապարփակ ծրագրի շնորհիւ՝ նաև դե-
մօկրատական է:

Կայ դասակարգ, որի ծրագրային քաղա-
քականութիւնը և առօրեայ տակտիկան յա-
րաբերական իմաստով բարերար անդրա-
դառնումներ են ունենում ազգային ընդհան-
րութեան համար այն բոլոր դէսքերում,
երբ նրանք պայքար են մղաւմ պետական
հին, վերակեաց ձևերի և տնտեսական պահ-
պանողականութեան դէմ: Այդպէս է լիբե-
րալ բուրժուազիան (վիզի կուսակցութիւնը)
Անգլիայում և հանրապետականները ֆրան-
սիայում՝ պահպանողականների, ոյսալիսա-
ների, բօնապարտիստների և կղերականների
դէմ մղած իրանց դարաւոր կուով:

Բայց կայ նաև այնպիսի դասակարգ, որի
նոյն իսկ սոսկ գոյութեան հասարակ փաս-
տը պարզապէս ժխտումն է նշանակում
նորագոյն հասարակակարգի: Որի տիրա-
պետութեան շահը բացասում է առաջադի-
մական փիսակերպումների բոլոր ուղիները
և որի դասակարգային ձգտումներն ու քա-
ղաքականութիւնը տրամադօրէն հակագ-
րում է ժողովրդական ամբողջութեան կեն-
սական շահերին, ամեն մի դեմօկրատիկ
սկզբունքի իրականացման: Այդպէս է ա-
ւանդական մենարատօնութիւններով ուռնա-
ցած պրուս-գերմանական հաստարազուկ
իւնկերթումը (խօսքը կալուածատիրական
ազնուականութիւնը), որը ամբողջ հոգով
կուզենար, եթէ կարողանար, յետ մղել

պատմութեան անիւր, բնաջնջել մէջտեղից
քաղաքցիական և կուլտուր-հասարակական
բարիքների բոլոր նուածումները և, եթէ
ոչ աւելին, վերականգնել գէթ 50-ական
թւականների (19-րդ դարի) պետական-քա-
ղաքական վերնաշէնքի բովանդակութիւնը:

Ճիշդ նոյնօրինակ մի դասակարգ է՝ իր
անշուշտ միայն աստիճանական տարբերու-
թեամբ՝ մեր երկրի յատկապէս վրացական
իրականութեան խոշոր կալուածատիրական
տոհմային ազնուականութիւնը, որի դրու-
թիւնը նկարագրեցինք մենք գրուածքիս
ընթացքում։ Նա իր էռւթեամբ, որպէս
այդպիսին, դէմ է մեր երկրի արդիւնաբե-
րական ոյժերի ազատ զարգացման, որովհե-
տեւ սա ընթանում է տեխնիքական նորա-
ձևութիւնների և տնտեսական պայքարող
մրցութեան բովով։ Իսկ խոշոր կապիտալով
օժանած քաղաքային մրցող տնտեսութեան
ամեն մի հարուած կոչված է միայն ազրա-
րային-նաստուրալ տնտեսութեան ներկայա-
ցուցիչների մանվան փողը փշելու։ Սակայն
լինել արդիւնաբերական ոյժերի, տնտեսա-
կան կեանքի ազատ էվոլիւցիայի դասակար-
գային հակառակորդ՝ նշանակում է ուրիշ
խօսքով լինել անհաշտ թշնամի սօցիալական
պրօցեսի, ազգային-հասարակական առա-
ջակիցութեան բոլոր արտայայտումների,
որովհետեւ վերջինիս հիմքն ու նախապայ-
մանը կազմում է տնտեսական զարգացումը՝
բարեյաշող պայմանների ուղեկցութեամբ։
Այս իդէօլոգիան, որ պաշտպանում է

պրուս-գերմանական իւնկերթումի կամ վրաց
կալուածատէր ազնուականութեան դասա-
կարգային շահերը՝ համազգային դրօշակի
հովանու ներքոյ, վերցնում է իր վրա պա-
տասխանատութիւն, բովանդակելու իր մէջ
այդ վերակեաց դասերի բոլոր հակակուլ-
տուրական տեսնդեսցները։ Եւ այն նացիօնա-
լիզմը, որ իր ուռուցիկ ֆրազէօլօգիայի
ծալքերում ինսամքով թագցնում է ազ-
նուազարմը արխտօկրատիայի և զօնա, կազ-
մում է ամենաբէկալցիօնէր տեսակը նացիօ-
նալիզմի։ Դա այսպէս կոչված ֆէօդալական
նացիօնալիզմն է, ազգաւեր և հակաժողո-
վըրգական մի հիւծախտ, որի դէմ պիտի
պայքարել բոլոր ոյժերով և միջոցներով,
որ իրականութեան մէջ ուզում է թող լինի
նա իր ծագման գենետիք հիմքերով։

Եւ եթէ ազրաքային իդէօլոգները Գեր-
մանիայում յայտարարում են որպէս ազ-
գային գիւղատնտեսութեան կործանումն ա-
մեն մի փորձ, որ ձգտում է թեթևացնել
կամ վերացնել գիւղատնտեսական արդիւնք-
ների գները այնքան բարդացնող սահմանա-
գլխային մաքսատարիֆը, այնպէս էլ վրաց
հողավաճառ ազնուականների պատենտառ
իդէօլոգները ազգակում են հրապարակով,
որպէս վրաց ազգային մի չարիք ու աղէտ,
հայրինիքի կորուստ, եթէ այս կամ այն
ազրաք սնանկանում է և վաճառում է որևէ
կապիտալիստի իր հողային սեփականու-
թիւնը։ Եւ ինչպէս որ Գերմանիայում տիրող
տնտեսական քաղաքականութիւնը դժուա-

րացնում է գիւղատնտեսական արդիւնքների ազատ մուտքը դրսից, որպէսզի ներսի շուշաներում խոշոր կալուածատէրերը թանդ գներով շահագործեն ազգային ընդհանրութիւնը, այնպէս էլ, աւաղ, վրաց ֆէօդաւական նացիօնալիստները ոչ միայն բողոքում են և տրանջում նորագոյն եւրօպական կուլտուրայի ամենախոշոր ֆակտորների—տեխնիկայի և կապիտալի—մուտքի դէմ իրանց յետընկած գաւառները, այլև, ով զարմանք, պահանջում են նրանք («էրի» և ընկ.), որ ողջ ազգը ցյետ գնէն իր բոլոր կարիքների բաւարարութիւնը և զոհաբերէ իր կանխիկ դրամագլուխները՝ ինքնաբերաբար մնանկացող ազնուականներին պինդ պահելու համար իրանց հողերի վրա:

Մեզ վրա պարտք է ծանրանում ապացուցելու և, յոյս ունենք, համոզելու ֆէօդական-նացիօնալիստներին, որ ազնուականութեան անկումով ոչ միայն վկաս ու կորուստ չունի վրաց ազգը, այլ և նա ունի ամենամեծ բարիքը վաղ թէ ուշ ազատագրվելու՝ տնտեսապէս և հասարակականօրէն, իր օրդանիզմի փոտած, հետեւապէս անպէտք մասնիկներից:



VII

Վրաց ազգի գերագոյն մեծամասնութիւնը, ինչպէս մենք տեսանք, բաղկացած է գիւղացիութիւնից, որի յարաբերական մասնակցութիւնը կազմում է ամբողջ ազգաբնակութեան աւելի քան 87%՝ Ուստի վրացական տարրը կազմում է մի առաջին կարգի գիւղացիական և երկրագործ ժողովուրդ ամբողջ Կովկասում:

Ի՞նչ յարաբերութեան մէջ է գտնվում վրաց հողագուրկ գիւղացիութիւնը՝ խոշոր կալուածատէր ազնուականութեան հետ:

Ցայտնի է, որ ամբողջ Կովկասում վրաց գիւղացիութիւնը աւելի, քան որևէ մէկը, զտնվում է դասային կախուածութեան մէջ կալուածատիրական արիստօկրատիայից: Վրացիութեան մէջ աւելի, քան որևէ այլ իրականութեան մէջ, պահպանվել են նախկին ֆէօդալական-ճորտատիրական յարաբերութիւնները հողատիրական սահմաններում: Այդ է հենց պատճառը, որ այնտեղ աւելի, քան Կովկասի որևէ այլ անկիւնում, տեղի ունեցաւ ուժեղ ազրարային շարժում (իմա Գուրիան): Նշանակում է՝ վրաց ազգային կեանքում դասակարգային յարաբերութիւնների լարված վիճակը՝ ազրարային հողի

վրա՝ աւելի մեծ ծաւալ և սուր բնաւորութիւն է ստացել, քան այլուր:

Գիւղացիութիւնը մատակարարում է խոչշոր կալուածատէրերին աշխատաւոր բազուկներ՝ վարձատրութեան ամենացածր նօրմաներով։ Առաջինը ներկայացնում է ռամիկների մի իրաւագուրիկ զանգուած՝ ենթակայ երկրորդի մենարտօն լիազօրութիւնների և հրամանների. հլու ու հնազանդ գարերով ռարբագործված աւանդութիւնների, որոնք ծայրանում և մարմնաւորվում են «տէր ու ծառայ», «աղա և գեադա» ասիական-նահապետական սկզբունքների մէջ։

Կալուածներ վաճառողներ հանդիսանութեն Վրաստանում, անշուշտ, ոչ սակաւահող և ոչ միջականող գիւղացիութիւնը, այլ խոշոր կալուածատէր ազնուականութիւնը։ Եշանակութ է՝ անհիմն է և աններելի պընդիլ, որ վաճառվող հողաբաժինների պատճառով տուժում է վրաց ազգը, սրա մայր հայրենիքը. աններելի և տեսդենցիօվ՝ չնշին փոքրաքանութեան շահերի վտանգման փաստը բռնազրօսիկօրէն փաթաթել ընդհանրութեան—չէզօք, անմասնակից գիւղացիութեան—շինքին։

Այսուհետեւ մննք կարծում ենք, որ ծշմարիտ ազգասէր ինտէլիգենտը չի պահանջի, որ սոզի այդ գերագոյն մեծամասնութիւնը (ուղիղ $87,40\%$) գիւղացիութիւն + $3,91\%$ քաղաքացիական տարր) զոհաբերէ իր բուլոր կենսական-կուլտուրական արժէքները $5,26\%$ կազմող տոհմային ազնուականու-

թեան շահերի անունով։ (Նոյն իսկ դրանից շատ աւելի քիչ, որովհետև խօսքը վերաբերում է այժմ արդէն խոշոր կալուածներ ունեցող ազնուականութեան)։ Հսկական ժողովրդասէր իղէօլօզը ոչ միայն չի քօղարկի այն անդնդախոր վիճը, որ ընկած է այդ երկու գիւղատնտեսական հատուածների —կալուածատիրական արիստօկրատիայի և սոսկ երկրագործ գիւղացիութեան—միջնի, այլ և իր իդէալական բաղձանքը կը համարէր՝ տեսնել առաջնի անհետ չքացութը՝ երկրորդի անտեսական ազատագրութեան համար։

Միթէ հարկ կայ երկար բացատրութեան՝ փոքր ինչ գիտակից և պատմութիւն սովորած մարդկանց համար, որ նախանձելի է և գերազանցելի հասարակական կազմը միայն այն երկիրներում, ուր գոյութիւն չունի այլ ևս միջնադարեան վերակեաց դասը ծնունդով և տօնմային աւանդութիւններով արտօնված խոշոր կալուածատէր ազնուականութիւնը։ Դարերի քաղաքական յեղաշրջումները վերջ դրին ֆէօդալական տընտեսակարգին և հասարակակարգին։ Մնացած բեկորները հին փառքի հետպհետէ մաքրվեցին յետագայ տնտեսական մրցութեան ընթացքում՝ կապիտալիստական անսահանջ նուաճումների գրոհից։

Այս վիճակը, ինչ առաջնակարգ երկիրներում կրել է կալուածատէր աւատականութիւնը քաղաքական յեղաշրջումների և տնտեսական մրցութեան հետևանքներով,

մեր երկրում կրում է նոյն դասը առայժմ միայն տնտեսական մրցութեան միջոցով։ Վերջինս, անկասկած, դեռ դանդաղ է և թոյլ Բայց նրան է պատկանում յաղթական ապագան, որովհետև մեր երկրի յետագայ կուլտուրական զարգացման հիմնական նախապայմաններից մէկն է կազմում այդ։

Սակայն վրաց օրգանները, վերջերս «Սախալիս Գագեթին» առանձնապէս, առարկում են մեզ, որ «մինչև օրս Վրաստանի սահմաններում դրամատէրերը ոչ մի տեղ չեն ցոյց տուել կապիտալիստական արդիւնաբերութեան ընդունակութիւն։ մեզանուր այսպիսի հայերը ձգտութ են աւելի վաճառականութեան և նրանց սեղանի փշրանքներից ոչինչ չէ հասնում վրաց գիւղացիութեանը և այս ասպարէզում նրանց ունեցած զործունէութիւնը չունի կուլտուրական ոչ մի արդիւնք»։

Նախ «Վրաստանի սահմաններում» խօսքերի տակ վրաց թերթը ներկայ գէպքում հասկանում է, ըստ երեսյթին, միայն գաւառները, ապա թէ ոչ նա չի կարող ուրանալ, որ Թիֆլիսում գործող արդիւնաբերական և ֆինանսական կապիտալի խոշորագոյն մասը գանվում է հայերի ձեռքում։

Երկրորդ՝ ի զուր է վրաց թերթը կարծում, որ մեր երկրի, մասնաւորապէս վրացական տերրիտորիայի տնտեսական աղբիւրների կապիտալիզացիայի անհրաժեշտութիւնը շեշտելով, ի նկատի ենք ունեցել լոկ միայն հայ կապիտալի և կապիտալիստի-

խաղացած կամ խաղալիք զերը։ Խնդիրը սկզբունքային բնաւորութիւն ունի միանգամայն և մեզ մինչև այստեղ ուշադրութեամբ հետևող ընթերցողը պիտի ինքը համոզված լինի, որ մեզ համար մազաչափ նշանակութիւն չունի վրացիներին այնքան շահագրգոռ հարցը, թէ ով է իր ազգութեամբ վրացական այս կամ այն գաւառում կալուածներ գնող կապիտալիստը՝ հայ, ոտւս, թէ եւրօպացի։ Մեր ելակէտը կազմում է, կրկնում ենք, մեր յետամնաց երկրի արդիւնաբերական ոյժերի արագ զարգացման շահը և դրանով պայմանաւորված հասարակական պրօգրեսը կովկասեան ժողովուրդների։

Վերջապէս երրորդ՝ «Սախալիս Գագեթին» թիւր հասկացողութիւն ունի կապիտալիստական արդիւնաբերակարգի զարգացման պայմանների մասին։ Նա մոռանում է կամ չը գիտէ, որ առևտրական (և անդամ վաշխառուական) կապիտալը սկզբնական ձեւերն են և նախակարագ ետները՝ արդիւնաբերական կապիտալի մուտքի համար որևէ երկրում կամ ժողովրդի մէջ, եթէ վրացական գաւառներում նա որոնում և գտնում է աւելի շուտ կապիտալի այդ սկզբնական ձեւերը, դա չի նշանակում, որ Շհայ դրամատէրերը ցոյց չեն տուել կապիտալիստական արդիւնաբերութեան ընդունակութիւն, այլ դա նշանակում է, որ կապիտալի նորագոյն, ստեղծագործող ձեւ—արդիւնաբերական կապիտալը—չունի դեռ անցեալ, ձգոծ ամուր

հիմքեր վրացական գաւառներում, այլ նոր նոր միայն սկիզբ է առնում նրա հոսանքը քաղաքներից դէպի գաւառները:

Զարմանալի տրամաբանութիւն: Եթէ վրաց օրգանը կարծես ակամայ խոստովանում է արդիւնքերական կապիտալի կուլտուրական նշանակութիւնը, ինչու հապանախորժ աղմուկով արշաւանք են սկսում նա և իր գաղափարակից օրգանները ամեն անգամ, երբ հայ (կամ օտարազգի) արդիւնաբերական կապիտալիստը գնում է այս կամ այն աղնուականի կուլտածները՝ արդիւնաբերական նպատակներով շահագործելու համար:

Հայ կապիտալիստի «սեղանի փշրանքներից ոչինչ չի հասնում վրաց գիւղացիութեանը»—ասում են մեզ:

Հետաքրքրական է իմանալ, թէ ո՞ր օրվանից սկսած են վրաց ֆէօդալական իդէօլոգները այդքան «փափուկ սիրտ» և «գուրգուրանք» ցոյց տալիս դէպի իրանց գիւղացիութիւնը, թէ այդպէս վերաբերվում են նրանք միայն այն ժամանակ, երբ հարկաւոր է իրանց խորշանքն ու թշնամանքը դէպի կապիտալն ու կապիտալիստը բառաստեղծական ժեստերով էֆեկտաւոր դարձնելու համար:

Եթէ առհասարակ շահագործողի սեղանից փշրանքներ են հասնում աշխատաւորին, դա էլի կարելի է այս կամ այն չափով միայն կապիտալիստի մօտ գտնել: Բայց որ կառուածատէր աղնուականը ոչ միայն փշրանք-

ներ չէ հասցնում գիւղացիութեանը, այլ և անզամ խլում է վերջինիս ձեռքից նրա չոր պատառը, այդ փաստի հանդէպ պատենտաւոր իդէօլոգները և՛ կոյր են, և՛ խուլ, և՛ համը:

Իրերի դասաւորութեան տարրական օբիեկտիվ ճանաչողութիւնը մեզ բոլորովին այլ բան է ասում կապիտալի կուլտուրական նշանակութեան մասին: Նացիօնալիստական նախապահարմունքներից ազատ, առաջադէմ միտք և լայն հօրիզոններ ընդուրկող մարդը բոլորովին այլ կերպ պէտք է դնէ հարցը:

Տնտեսութեան մը ձեզ և մը հասարակական դասակարգի հարեւանցիութիւնն է ցանկալի և օգտակար վրաց գիւղացիութեան (կամ առհասարակ գիւղացիութեան) համար:

Այսպէս պէտք է դնել հարցը:



տեխնիկայի այս նուրբ դիալեկտիկական
բնոյթն է, որ չեն ուզում հասկանալ կամ
չը դիտեն ըմբռնել անտի-հայկական կամ
ֆէօդալական նացիօնալիստները:

Պնդել հակառակը, այսինքն պնդել, որ
գիւղացիութիւնը օգուտ չունի կամ անգամ
վլաս ունի կապիտալիստական կարգերի
մուտքից, նշանակում է պնդել մի այսպիսի
արսուրդ, որ օրինակ, կովկասեան, ոռուսա-
կան, չինական, թիւրքական և այլ նահապե-
տական գիւղացիութիւնը աւելի նախանձե-
լի է իր վիճակով, քան Արևմտեան Եւրօ-
պայի գիւղացիութիւնը: Իսկ պնդել մի
այդպիսի արսուրդ՝ նշանակում է հանգու-
ցեալ նարօդնիկութեան պարապ, բարոյա-
կան զրոյցները կրկնելու անմտութիւնն
ունենալ:

Որո՞նք են այն սօցիալ-կովուրական
քարերան հետեւանցները, որ արտաքե-
րում է գաւառներ թափառող և այնտեղ
ինտենսիվ շահագործութեան վայրեր որու-
նող խոշոր կապիտալլը:

Իլլիւստրացիայի համար դիմենք կօնկ-
րէտ օրինակների:

Նախ և առաջ ազնուականութեան հետ
ունեցած իր աւանդական-կախուածական
կապերի խղումից և անջատումից յետոյ
գիւղացիական տարրը կանգնում է մի բո-
լորովին այլ տնտեսական կո թեգորիայի,
մի կատարելապէս հակադիր հասարակական
գասակարգի դէմ առ դէմ: Միանգամայն
տարրեր սօցիալական յարաբերութիւններ

ՎIII

Մենք նկարագրեցինք արդէն գրուածքիս
նախավերջին մասում, թէ որ աստիճան
շահագրգոված է գիւղացիութիւնը անտե-
սապէս (և ամեն կողմերից) օր առաջ ա-
զատագրվել խոշոր կալուածատիրական ազ-
նուականութեան հետ ունեցած իր կախ-
եալ վիճակից, առհասարակ նրա հարկա-
նութիւնից, որից բացի վնասից ոչ մի
օգուտ ունենալ չի կարող երկրագործ գիւ-
ղացիութիւնը:

Այժմ կալիս ենք աւելացնելու, որ նորա-
դոյն կապիտալիստական տեխնիկան ոչ
միայն այն բացասող ֆակտօրն է, որ
կոչված է իր ուժեղ մրցութեամբ անկման
ուղի հարթելու ֆէօդալական տնտեսակարգի
համար և ազատագրելու գիւղացիութեան
իր աւանդական ճորտատիրական կախուա-
ծութիւնից, այլ և այն դրական խոշորա-
գոյն ֆակտօրն է, որ իր իսկ միջոցով կոր-
ծանած շէնքի վլատակների վրա կառու-
ցանում է նորագոյն կուլտուրայի կոթող-
ները և այս կամ այն չափերով մօտեցնում
գիւղացիութեան այդ կուլտուրայի բազմա-
պիսի բարիքներին:

Ահա կապիտալի և կապիտալիստական

են ստեղծվում երկու հնոր հարեաններին
միջն:

Գիւղացու հանդէպ կանգնած կապիտա-
լիսը չի օժտված տոհմային իրաւազօր
արտօնութիւններով, տիրելու, տիրապետե-
լու, հրամայելու և տուրքեր գանձելու
աւանդական սանկցիաներով։ Կապիտալիս-
տի՝ գաւառական կեանքի այդ հնոր հիւրին
հանդէպ կանգնած գիւղացին այլ ևս ուստ
ծեռովք կաշկանդված պատմական ճորտը չէ,
հլու, հասպանդ ծառան, տուրքատու ռամի-
կը չէ։ Գիւղացու հանդէպ կանգնած կապի-
տալիսը քաղաքացիական խաւերից վեր
բարձրացած նոր տիպ է, որի տիրապետու-
թիւնը աւանդական իրաւունքներով և
տոհմային արտօնութիւններով չի ամրա-
պնդված, այլ զուտ նիւթական արժէքների
մեծ կուտակումների ստեղծած հասարակա-
կան ոյժով։ Կապիտալիստի հանդէպ կանգ-
նած գիւղացին, իր հերթին, զերծ է այլ ևս
իր ւականորէն պայմանաւորված բոլոր պար-
տականութիւններից, անարգել տնօրէնը իր
ոյժերի և կամքի որոշումների։ Այդպիսով
կապիտալիստն ու գիւղացին մտնում են՝
ոյժերի գնման եւ վաճառման ազատ յա-
րաբերութեան մէջ։

Նախկին հողագուրկ կամ սակաւահող գիւ-
ղացին, եթէ նա որոշ վարձատրութեամբ
աշխատում էր խոշոր կալուածատիրոջ մօտ,
իբրև գիւղատնտեսական բանւոր, այժմ նոյն
գիւղացին վաճառում է իր ոյժերը գործա-
րանատէր կամ հանքարդիւնաբեր կապիտա-

լիստին՝ անկասկած վարձատրութեան աւելի
բարձր նօր թաներով։ Նա դառնում է ին-
դուստրիական կամ հանքագործ բանւոր, ո-
րը ունի իր մէկից աւելի առաւելութիւն-
ները գիւղատնտեսական բանւորի և նոյնիսկ
ինքնուրովն հողագործ մանր գիւղացու հան-
գէպ՝ թէ տնտեսական և թէ սօցիալական
տեսակէտներից։

Ոչ միայն այդք Գաւառներում մուտք գոր-
ծած կապիտալիստական ձեռնարկութիւն-
ները բաց են անում աշխատանքի բազմա-
պիսի աղքիւրներ՝ իրանց ուղղակի և անուղ-
ղակի ճիւղերով՝ և գրանով առիթ ու հնա-
րաւորութիւն տալիս գիւղացիական աղգա-
բնակութիւնից հարիւր հապարաւորների՝
իրանց մօտիկ ծննդավայրում գտնել ապ-
րուստի միջոցներ, ապա թէ ոչ հակառակ
գէպօւր նրանք պիտի հարկադրված լինէին
նոյն մղումներով հեռաւոր, կենտրօնական
քաղաքները գաղթելու Խոշոր, արդիւնաբե-
րական կապիտալի արտահոսման աճումը՝
քաղաքներից գաւառներ, բնական անհրա-
ժեշտութեամբ կարող է նուազեցնել պրօ-
լետարականացող գիւղացիութեան արտա-
գաղթը գաւառներից քաղաքներ։ այսինքն
առաջ բերել ցանկալի հակագլեցութիւն
աղգաբնակչական յարաբերութիւնների մէջ։
Այդ՝ առաջին։

Երկրորդ՝ ակնյայտնի իրողութիւն է, որ
տեխնիկայի և կապիտալի արշաւը գէպի
երկրի յետ ընկած մասերը՝ ստեղծում է
այնտեղ հետզետէ իրանց գոյութեամբ ու

գործունէութեամբ պայմանաւորված այն
բոլոր կուլտուրական դրութիւնները, որ
ունին ժամանակակից քաղաքային հասարա-
կութիւնները: Կապիտալը իր հետ միասին,
փոխադրում է գաւառ հատուած առ հա-
տուած այն բոլոր կուլտուրական բարիքնե-
րը— նորածեւութիւններ, դիւրութիւններ,
յարմարութիւններ, կենցաղի, ժամանակի
եւ ոյժերի տնտեսութեան ու խնայման
այն բոլոր միջոցները—որ նա ժամանա-
կի նուաճումների յամառ մրցութեան պրօ-
ցեսում ստեղծագործել է ամենից առաջ խո-
շոր, առևտրական-արդիւնաբերական քա-
ղաքներում: Բաւական է յիշել հէնց միայն
ժանապարհների կանօնաւորումը, երկաթու-
ղային գծերի մուտքը, սանիտար սկան պայ-
մանների բարելաւումը, հիւանդանոցների,
դպրոցների, գրադարան-ընթերցարանների,
հետեապէս և գրականութեան, մտաւոր կուլ-
տուրայի մուտքը խուլ գաւառները: Կարձ՝
ծաղկում, բարգաւաճում է նախնի նահա-
պետական կեանքը: Սրանք նորագոյն պօզի-
տիվ կուլտուրայի միշտ հատուածներն են,
որոնք կարող են մուտք գործել, ծաւալվել
և արմատանալ միայն այնտեղ, ուր ամենից
առաջ հրաշագործ տեխնիկան, շինարար
ու ստեղծագործ կապիտալն է թևակոխում և
իր շահագործումների ու շահեցումների բու-
նը հաստատում: Ինչ ասել կուզէ, որ այդ
բոլոր բարիքների հետ միասին զուգընթա-
ցաբար մուտք են գործում գաւառները նաև
կապիտալիստական կուլտուրայի յայտնի

նեզատիվ (բացասական) կողմերը նրանք
այսպէս անուանված ռանհրաժեշտ չարիք-
ներ» են, որոնց դէմ կարող ենք պայքարել,
բայց նրանցից խուսափել կամ նրանց ար-
մատապէս բնաջնջել անկարող ենք, քանի
իշխում է կապիտալիստական արդիւնաբե-
րութեան սիստեմը, որպէս այդպիսին: Յա-
մենայն դէպս կասկածից վեր է, որ կապի-
տալիստական կուլտուրան՝ հանդէպ ասիա-
կան նահապետական յետամացութեան և
ֆէոդոլական «կուլտուրայի» մի «արքայու-
թիւն» է, որի բացասական կողմերը միայն
ժամանակաւոր բնաւորութիւն ունեն, իսկ
որպական բարիքներն անմեռ են եւ յալի-
տեան արժեքալէց:

Այդ գեռ բաւական չէ:

Կապիտալիստական ձեռնարկութիւնների
երեան գալը գաւառներում առաջ է կոչում
իր ետևից երկու մենտեսական շատ կարևոր
մօմենտներ: Նախ ժողովրդական մասսայի մեծ
կուտակումները՝ կենտրոնացած որոշ կտե-
րում, և փողային անտեսութեան առատ շրջա-
նառութիւնը ստեղծում են գիւղատնտեսական
արդիւնքների վաճառման համար մեծ շու-
կաներ, այնպէս որ շրջակայ զիւղացիու-
թիւնը օգավում է մի կողմից այդ մերձա-
ւոր շուկաներից, իսկ միւս կողմից դիւրու-
թիւն է ստեղծում նրա համար մօտա-
կայ երկաթուղիների միջոցով իր ար-
դիւնքները մեծ քաղաքները տեղափոխելու
երրորդ կողմից մարդաշատ գործարանները
բնականօրէն բարձրացնում են մեծ չափերով

շրջակայ հողաբաժինների, վառելափայտի,
ածուխի և շինելափայտի արժէքները:

Սրանք և մի շարք այլ անմիջական բարերար հետևանքներ են ունենում կապիտալիստական ձեռնարկութիւնները մինչ այն վայրենի և կիսաւերակ գաւառական վայրերում, որոնցից առաջին հերթին օգտվում են շրջակայ գիւղացիական տարրերը և մինչ այդ իրանց գոյութիւնը պահպանած խոշոր կարուածատէրերը. վերջիններս անշուշտ աւելի, քան առաջինները:



IX

Որպէսզի մեր այս բոլոր դիտողութիւնները աւելի համուեցուցիչ և շօշափելի դարձնենք, կը բերենք մի քանի յայտնի օրինակներ գործնական կեանքից:

Ով ծանօթ է Հարաւային Ռուսաստանի, յատկապէս Դօնի շրջանի արտիւնաբերութեան այն հոչակաւոր ճիւղերի զարգացման պատմութեան հետ, ինչպէս են մետալուրգիական և քարածնի հանքարդիմաքնրութիւնը, գիտէ, թէ ինչպիսի յետ ընկած ու ողբալի վիճակ էր ներկայացնում այդ շրջանը մինչև 19-րդ դարի 70-ական թւականները. դիտէ նաև, թէ ինչպիսի յեղաշրջումներ մտցրին այդ թւականից ի վեր բնութեան այդ վայրենի ծոցում անգլիական, բելգիական և ֆրանսիական տեխնիկան ու կապիտալը. ինչպիսի արդիւնաբերական օազիս, եւրօպական-կապիտալիստական կուլտուրայի մի փարթամ ու ծաղկաշէն վայր է ներկայացնում այժմ վիթխարի չափերով ու արագութեամբ առաջադիմող Դօնի շրջանը:

Վերցնենք մի երկու օրինակ արտասահմանեան հսկայ ձեռնարկութիւններից և ցոյց

տանք, թէ նրանց տեղափոխած կապիտալի հր մասերն են բաժին հասել արդիւնաբերավայրի ազգաբնակութեան զանազան խաւերին:

Ահա ձեզ ռ. Ռուսա-Բելգիական ընկերութեան Պետրօվսկ գործարանից օրինակը:

Ամբողջ գործարանի կառուցման և նրա բոլոր պարագաների (մեքենաների և այլն) հայթայթման համար ծախսել է այդ ընկերութիւնը ոչ պակաս քան 15.082,843 ր. գրամագլուխ, որից միայն 3.486,300 ր. կամ 23% է ծախսվել արտասահմանում (մեքենաների համար). իսկ մնացածը (11.596,545 ր. կամ 77%), աւելի քան 3/4-ը ամբողջ գրամագլւխ, ծախսվել է Ռուսաստանում զանազան նպատակների վրա: Վերջին գումարը ծախսվել է հետևեալ կերպով.

1)	Տեղական կառուածէրերին.	1.061,343 ր. կամ 9,0%
2)	Նիւթերի վրա (փայտ և այլ պարագաներ).	2.715,000 » » 23,3 »
3)	Բաննորական ոյժերին.	3.075,200 » » 26,6 »
4)	Կղթված պերսոնալին.	763,500 » » 6,5 »
5)	Զանազան տընտեսական գրուպ-պաներին.	1.146,500 » » 10,1 »
6)	Պետական գանձարանին.	1.895,000 » » 16,5 »
7)	Երկաթուղիների համար.	936,000 » » 8,5 »
Միասին.		11.596,343 ր. կամ 100%

Ուշադրութիւն դարձրէք այդ ծախսերի առաջին հինգ բաժինների վրա, որոնք (մանաւանդ և 1, 2, 3) մեծագոյն մասով տեղական բնաւորութիւն ունեն: Դրամագլւխի մեծ մասը սպառվել է տեղական ազգաբնակութեան զանազան գրուպպաների վրա (կալուածատէրերի, հում նիւթեր հայթայթողների և, որ գլխաւորն է, բանւորական ոյժերի վրա և այլն):

Մի այլ օրինակ: Այսպէս կոչված «Նօվօրոսիյսկ Ընկերութեան» արտասահմանեան ձեռնարկութեան (այս դէպքում արդէն արդիւնաբերութեան և ոչ գործարանի կառուցման) ծախսերը (1896 թ.) ունեցել են հետևեալ դասաւորութիւնը. 12.397,758 ր. կապիտալը ծախսվել է այսպէս.

1)	Բաննորական ոյժերի համար	4.227,613 ր. կամ 34,1%
2)	Կրթված պերսոնալի վրա	187,415 » » 1,5 »
3)	Զանազան տընտեսական գրուպ-պաներին	3.915,069 » » 31,6 »
4)	Յօգուտ պերսոնական գանձարանի.	281,683 » » 2,3 »
5)	Յօգուտ երկաթուղիների.	1.509,273 » » 12,2 »
6)	Ծախսեր Ռուսաստան դուրս.	187,194 » » 1,5 »
7)	Յօգուտ ակցիոներների.	2.089,511 » » 16,8 »
Միասին.		12.397,758 ր. կամ 100%

Դուրս հանեցէք այս գումարից արտասահմանցիների բաժինը (№ 6 և 7), այն է 18,2% և դուք կը ստանաք մօտ 82% պարունակող խոշորագոյն մասը եւրոպական կապիտալի, որ գործադրվել է շահեցվել է ոռուսական ժողովրդատեսութեան ծոցում։ Այդ գումարից ևս հանեցէք պետութեան ֆինանսների հասած մասերը (№ 4 և 5), 14,5%, և դուք կը ստանաք աւելի քան 67%, կամ՝ հանելով դրանից կրթված պերսօնալի ոռոճիկները ևս (№ 2) 1,5%, կը մնայ 65,5%, կամ ամբողջ դրամագլխի մօտ 2/3 մասը, որ ծախսվել է Դոնի շրջանի ժողովրդատեսութեան ծոցում, ազգաբնակութեան զանազան գրուպաների վրա։

Նման բազմաթիւ օրինակներ կը գտնէք ստար կապիտալի շահեցման և գործունէութեան մէջ (տես Յ. Բրանդ՝ «Иностранные капиталы» II հատ.)։

Երեակայեցէք, որ նախ քան արդիւնաբերական կապիտալի մուտքը Դոնի բաստէյնում՝ հողի իւրաքանչիւր դեսեատինը գնահատվել է լաւագոյն դէպքում 50—60 ըուբլի, իսկ յետոյ, արդիւնաբերութեան ծաղկած շրջանում, նոյն հողի դեսեատինը գնահատվել է ոչ պակաս քան 450—500 ը.։ Աւելին ասենք Կապիտալիստները վճարում էին գիւղացիներին արդիւնաբերական նպատակների համար պիտանի հողերի փոխարէն առասպելական գներ։ Այսպէս, օրինակ, մի արտասահմանեան ձեռնարկութիւն կապալով վերցրել է Նիկիտօվկա գիւղի բնայ-

կիչներից 85 դեսեատին հող 30 տարի ժամանակով, որի համար նա պարտաւորվել է վճարել գիւղացիներին 700,000 ը. (գրանից 300,000 ը. սկզբից): Բացի դրանից նոյն կապալառու ընկերութիւնը գնել է խոշոր կալուածտէրերից 1550 դեսեատին վարելանող 210,000 ըուբլով և տուել նոյն գիւղացիներին, որպէս նրանց կատարեալ սեփականութիւն։ Նման օրինակները ևս բազմաթիւ են։

Բայց ինչ են ասում և ապացուցում այդ օրինակները ինքնին վերցրած՝ իրանց տընտեսական և կուլտուրա-հասարակական նշանակութեամբ։

Դրանք ցոյց են տալիս մեզ առ ձեռն աչք ծակող փաստերի, որ նորագոյն տեխնիկան և խոշոր կապիտալը այն հզօրագոյն յեղափոխական ոյժերն են գաւառական յետ ընկած անկիմներում, ուր նրանք ճեղքում են բնութեան անմատչելի գիրկը, յաղթահարում տարերային ոյժերին, յայտնագործում գետնի տակ թագնված գանձերը, արժէքաւորում նրանց տնտեսապէս, դարձնում այդ բոլորից կուլտուրական բարիքներ, շէն ու ծաղկած վիճակի վերածում աւերակ ու անմարդաբնակ վայրերը, հայթայթում աշխատանքի վաստակալից աղբիւրներ հարիւր հազարաւոր մինչ այդ թերևս կիսաքաղց մարդկանց համար, բարձրացնում շրջակայ միլիոնաւոր ազգաբնակութեան նիւթական կինցաղի և կուլտուրական կացութեան մակարդակը և վերջա-

պէս, վերջին հաշտով, զարկ տալիս մեր
երկրի ժողովրդատնտեսութեան և պետական
ֆինանսների առաջադիմութեան:

Մարգարէ չեմ, բայց նախազգում եմ, որ
վրաց անտիհայկական նացիօնալիստները,
կարկամած թւածս շօշափելի փաստերի հան-
դէպ, առարկելու ոչինչ էական բան չը
պիտի ունենան, բայց եթէ հետեւել ան-
մտութիւնը:

«Այս, ձիշդ են այդ բոլորը: Բայց հայ
կապիտալիստները եւրոպացիներ չեն: Եւ
այն կուլտուրական նշանակութիւնը, որ
ունեն անգլիական, բէլգիական և ֆրան-
սիական կապիտալիստները Դօնի սահման-
ներում, նոյնը չունեն հայ կապիտալիստ-
ները վրացական գաւառներու՞»:

Օ՛ պարօններ: Ծովում խեղդվողը, ասու՞
են, ծղօտիցն է բռնու՞ փրկվելու համարէ
կատարելապէս դիրակազերծ եղած նացիօ-
նալիստները չունեն այլ ևս ինքնարդարաց-
ման օրեւէ բանական ու փաստական միջոց,
բայց եթէ անմիտ ու անհեթեթ առարկու-
թիւնները:

Նախ գրուածքս ուշադքութեամբ կարդա-
ցողը կը ստանայ այն աներկբայելի տպաւո-
րութիւնը, որ մեզ համար ոչ մի նշանա-
կութիւն չունի կապիտալիստների ազգային
պատկանելիութեան հարցը, այլ ինքը
տեխնիկան ու կապիտալը, որպէս օրիեկտ-
ներ, որպէս արդիւնաբերական-տնտեսական
գործօններ և կուլտուրական համարժէք բա-
րիքներ: Միւս կողմից՝ կը համոզվէ ընթեր-

ցողը առանց այլեայլութեան, որ վրաց
խոշոր կալուածատիրական իդէօլօգները,
որպէս այդպիսիք, առհասարակ դէմ են
տեխնիկայի և կապիտալի մուտքին իրանց
գաւառները՝ որ ազգից ուղում են թող լի-
նեն նրանց ներկայացուցիչները: Նրանց չէ
հետաքրքրութ երկրի տնտեսական առաջա-
դիմութիւնը և ազգաբնակութեան կուլտու-
րական բարեկեցիկ վիճակը, այլ այն, որ
այդ բոլորի գնով ընկնում է վրաց ազ-
նուականութիւնը իր հողատիրական բարձ-
րութիւնից: Մի երևոյթ, որ սառնասրտօրէն
տանել չեն կարող ֆէօդալիզմի պատճենա-
ւոր իդէօլօգները:

Բայց մենք չենք մոռանում մի կարևոր
հանգամանք. այն. որ վրաց նացիօնալիստ-
ները առանձնապէս գրգռվում և զայրանում
են, երբ նրանց ազնուականների կալուած-
ները անցնում են հայ կապիտալիստների
ձեռքը, քան եթէ վերջիններիս փոխարէն
լինէին, օրինակ, ոռու կամ արտասահմա-
նեան կապիտալիստներ:

Ի՞նչ սա հմանու՞ պիտի որոնել անտի-
հայկական նացիօնալիզմի այդ յատուկ մօ-
տիվները:



X

Մենք կանգնած ենք մի բաւական ուշաւ գրաւ հարցի առաջ:

Եթէ գուք հարցնէք, օրինակ, ոռւսական, գերմանական կամ ֆրանսիական նացիոնալիստներին, թէ արդեօք որ տեսակ կապիտալի շահագործութիւնը կը գերադասէին նրանք իրանց հայրենիքու՞մ համերկրացու թք օտարերկրացու, նրանք միաբերան և առանց տատանվելու կը պատասխանեն ձեզ համերկրացու կամ համագաղաքացու կապիտալը:

Թւում է, որ հէնց միայն ժողովրդատնտեսական շահերի տեսակէտից նրանք կատարեալ իրաւացի և արդարացի են իրանց պատասխանով։ Զք որ օտարերկրացու կամ օտարահպատակի տեղափոխած կապիտալը իր որոշ տոկոսները՝ ամենից առաջ դիվիդենտների ձևով, մի կողմը թուղած օտար ձեռնարկուների միւս օգուտները, նորից վերադարձնում է իր բնիկ հայրենիքը, որտեղից գաղթել է։ Մինչդեռ համերկրացու կապիտալը իր բոլոր մասերով մնում և շահեցվում է տեղական ժողովրդատնտեսութեան մէջ։

Փորձեցէք հապա նոյն հարցով դիմել վը-

րաց նացիոնալիստներին։ Նրանք, որպէս հաւատարմատար իդէօլոգներ կալուածատէր ազնուականների, առհասարակ դէմ են կապիտալի կործանարար և շինարար մուտքին վրացական գաւառներում։ իսկ երկրորդ՝ ընտրութեան դէպքում կասկած չը կայ, որ կը գերադասեն նրանք օտար եւրոպականի կապիտալը որևէ համակովկասցու (օրինակ՝ ներկայ դէպքում հայի) կապիտալից, չը նայելով որ առաջնի դրամագլխից զգալի տոկոսներ (ըստ յայտնի քիմիկոս Մենդելէվի միջին թուղ 20%) կրկին չուռմ են եւրոպա, իսկ համակովկասեան քաղաքացունը ամբողջապէս մնում է կովկասեան ժողովրդատնտեսութեան, մասնաւորապէս տուեալ վրացական գաւառի տնտեսութեան մէջ։

Պարագօ՞քս է այս ի՞նչպէս բացարել այդ տարօրինակ վերաբերմունքի մղումները։ Զք որ, եթէ հայը չը գնէ վրաց ազնուականի վաճառքի հանած կալուածը, պիտի գնէ այն ոռւսը կամ օտար եւրոպացին։ Ուրեմն ինչո՞ւ բացառակի ատամ-կրծացներ հայ կապիտալիստների հստցէին։

Յաճախ ենք կարգացել ու լսել նման հարցեր մամուլի տաք պայքարի շրջանում։

Պատճառները պիտի որոնել քաղաքացիական և քաղաքական սահմաններում։ Տընտես սկան շահերը պարզապէս զոհաբերվում են քաղաքական նպատակների անունով։ Բացատրենք ինչո՞ւ և ինչպէս։

Անդրկովկասի որոշ կէտերում, հէնց միայն

Թիֆլիսի հահանգը ձեզ օրինակ, վրացինեռը ամենից խիտ և յարաբերական ամենաշեծ չափերով ապրում են հայերի հետ սերտ հարեանութեան մէջ։ Ազգաբնակչական յարաբերութիւնը հայերի մէջ աւելի նպաստաւոր է, քան վրացիների մէջ։ Օրինակ՝ ըստ 1897թ. վիճակագրութեան Թիֆլիսի նահանգի հայ ազգաբնակութիւնը կազմում էր ամբողջութեան միայն 19%, իսկ ըստ 1912 թւականի տուեալների, ոյսինքն 15 տարուց յետոյ, հայերի մասնակցութիւնը հասել էր 26,17%⁰ աճելով աւելի քան 7% ով։ Մինչդեռ վրացիների մասնակցութիւնը հաւասար էր առաջ 44,60% ի, իսկ յետոյ 41,24% ի, նուազելով 3,35% ով։ Թիֆլիսի գաւառում արդէն հայերի յարաբերական մասնակցութիւնը գերազանցում է վրացիներից, կազմելով տեղական սմբողջ ազգաբնակութեան 36%, իսկ վրացիները՝ 26,17%⁰։

Հայկական տարրի իւրաքանչիւր առաջնապահութիւն, իրեն հասարակ ազգաբնակչական փաստ, կարծես ակամայ ջուր է մաշում վրաց նացիօնալիստների ռքաղաքական ծրագրից վրա։

Խնչի մէջ է ծայրանում այդ ծրագիրը։ Վրաստանի ֆեդերացիայի կամ աւտոնոմիայի ամեծ իդէային կամ աւելի շուրջ, ինչպէս յետոյ կը տեսնենք, մեծ ու ցեղալից ուստօպիայի մէջ։

Եւ ֆէօդալական կամ անտի-հայկական նացիօնալիստները ուրիշ ոչ չեն, բայց

եթէ հէնց իրանք՝ ֆեդերալիստները։ Այժմ սլատկերացրէք ձեզ մօտաւորապէս նացիօնալիստական ատամ-կը ճտոցի մօտիվները։

Իւրաքանչիւր հողավաճառման ակա՞վ վրացի կալուածատիրոջ և հայ կապիտալիստի միջն, երկսայրի սրի հարուած է ֆեդերալիստների տեսակէտից։ Որովհետև այդ ակտով ոչ միայն ընկնում է վրացի ազնուականը—իսկ դա նշանակում է՝ վրաց ազգային-հասարակական կեանքի տիրող սիւնը—այլ և կորչում է կտոր-կտոր վրաց հայրենի տերրիտորիայից, աղարտվում և այլատարը բնակչութեան է վերածվում վրացական նախկին անազարտ ու միատարր հայրենիքը։ Իսկ այդ երկոյթը, նրանց կարծիքով, խանգարում կամ արգելառիթ նշանակութիւն է ստանում։ Վրաստանի ապագայ քաղաքական իդէալն իրականացներուց Հայկական կապիտալի ամեն մի արշաւ դէպի վրացական գաւառները աղմկում, յուզում է ֆեդերալիստների բանակը։ ԶԲ որ, մտածում են նրանք, հայ կապիտալիստները ստեղծելով վրացական գաւառներում նիւթական արժէքներ, ամրացնում են այնաւելի իրանց տիրապետութեան հիմքերը, գառնում տիրապետող գասակարգ հարազատ վրացական կեանքում, վրաց ժողովրդի ծոցում։ Աւելացրէք դրա վրա և այն ուսուցիկ ֆանտազիան, որով հաւատացնել հն ջանում վրաց ֆեդերալիստները, որ իրը

միայն տնտեսական շահերը չեն, որոնք հատհատ հայ կապիտալիստներին՝ միանգամայն անկախ իրարից՝ մղում են հողեր գնել և գործարաններ հիմնել Վրաստանում, այլ դա քաղաքական միտումներով առաջնորդվող մի կազմակերպված արշաւ է՝ դիտաւորութեամբ խանգարելու համար ֆեղերալիստների փայփայած քաղցր անուրջները: Միայն իրանք՝ հայ կապիտալիստները չեն, որ տեղեր են գրաւում վրացական գաւառներում, այլ և ժամանակի ընթացքում պիտի աշխատեն նրանք հայկական գաւառներից մասսայօրէն բերել հայեր և վերաբարնակեցնել իրանց ձեռք բերած կալուածներում ու այդպիսով կազմել հայկական գաղութներ վրացական տերրիտորիայում:

Ահա ինչ են մտածում նրանք:

Ահա ձեզ պատճառը այն՝ կարող էի ասել՝ օրգանական ատելութեան, որ տածում են վրաց ֆեղերալիստները հայկական բուրժուազիայի, յատկապէս սօլօլակցիների դէմ: Հաճեցէք կարդալ ՇԱԽԱԼԻԾ Գաղէթի», ֆեղերալիզմի պատենտաւոր օրգանի հետեալ գոհարները.

Աեհաստանում լեհերը ոչ ոքի թոյլ չեն տայ իրանց ազգի ազատութեան գաղափարի դէմ խօսելու, իսկ մեզանում սօլօլակցիներն են հակառակում վրաց ազատութեան իրականացման, որովհետև նրանք շատ լաւ գիտեն, որ Վրաստանի ինքնավարութիւնը հայկական պլուտօկրատիայի

մահը կը լինի» (ընդգծումները իմն են): Եւ այդ խնդրի շուրջը վրաց ֆեղերալիստները տաք պայքար են մղում վրացական մարքսիստների դէմ, անուանելով նըրանց «ազգի ներքին թշնամիներ ու դաւաճաններ», որովհետև նրանք չեն միանուք ֆեղերալիստների հետ՝ «միահամուռ ոյժերով Վրաստանի ինքնավարութիւն պահանջելու համար»: Այդ էնթուզիաստ պատրիոտների աչքում վրաց մարքսիստները նոյնիսկ բարեկամներ են հանդիսանում հայկական պլուտօկրատների համար, որովհետև «այդ վերջինների աշակցութիւնը միմի անգամ իրանց պէտք է գալիս»:

Կրկնում ենք, հայ կապիտալիստների անտեսական գրաւումները Վրաստանում ոչ միայն խոշոր կալուածատէր աղնուականութեան անկման ուղին է հարթում—ինչպէս կանէին նաև օտար կապիտալիստները, իբրև բնական մրցութեան մի հետևանք—այլ և մի բան աւելի, հայ կապիտալիստները՝ ըստ վրաց նացիօնալիստների վերասլաց ֆանտազիայի, բաց են անում նաև ան ու երկիւղի դուռ՝ վրաց ազգային-քաղաքական ծրագրերը խանգարելու համար»:

Ահա ձեզ պատճառը այն պարագօքսալ վերաբերմունքի, որ ունեն վրաց նացիօնալիստները մեր երկրի անտեսական առաջադիրութեան գործում՝ նրանք, եթէ ընտրութեան հարց ծագէ, աւելի շուտ կը գերադասեն օտար եւրոպացու, քան իրանց համագաղաքացի հայի, իրանց հարեան սօ-

Խոլակցու կապիտալի մուտքը վրացական
հայրենիքի խուլ անկիւնները:

Որքան խօսք, այնքան անմտութիւն, որս
քան մտքեր, այնքան թեթևամտութիւններ
են թագնված ֆեղերալիստների փաստա-
բանութիւնների հիմքում։

Նախ նրանք մեծ ատեսացիա են տալիս
հայկական բուրժուազիային, վերագրելով
հայ ազգային-քաղաքական գիտակցութեան
բարձր աստիճան, վճռականութիւն և կազ-
մակերպված կամք։ Ո՞հ, որչափ մեծ պատիւ-
է այդ մի դասակարգի հասցէին, որը չունի
նրան վերագրվածների ստուերն անգամ։ Եւ
որչափ մեծ կը լինի խանդավառ պատրիոտ-
ների ոգեսրութիւնը, եթէ նրանք փորձով
համոզէին ասածներիս ճշգութեան մէջ։

Երկրորդ՝ հետաքրքրական էր «Ասխալիս
Գաղեթից» կամ նրա փոխարէն իր քոյր
«Էլրից» լսել մի փոքրիկ կօմինտար նրա
այն կաթեզորիկ յայտարարութեան, թէ
ինչպէս է նա մտածում կամ պատկերաց-
նում իրան՝ «հայկական պլուտօկրատիայի
մահը» այն դէպքում, եթէ իրականանայ
«Վրաստանի ինքնավարութիւնը»։ Ի՞նչպէս,
պիտի ըննի՞ ոյժով դուրս քշէք հայ կապի-
տալիստներին «ինքնավար» Վրաստանից
թք պիտի նոյնախախ ընուվթամբ կօնֆիս-
կացիայի ենթարկէք նրա նիվծական
հարստութիւնները։ Այլ կարգի «մահ» ան-
կարելի է երևակայել հայկական ամրապնդ-
վող բուրժուազիայի համար՝ ենթաղրական
«ինքնավար» Վրաստանում։ Դուք հօ չէք

կարող մանկական միամտութիւն ունենալ՝
հաւատալու, որ «ինքնավար» Վրաստանում
կառաջանայ մի այնպիսի ուժիղ վրացական
ազգային բուրժուազիա, որ յաղթական մըր-
ցութեամբ ընական մահաց բան կը դատա-
պարտէ հայ բուրժուազիային։ Ոչ միայն
«ինքնավարութիւն», այլև եթէ ինքնանկա-
խութիւն անգամ ձեռք բերէ Վրաստանը,
այդպիսի մի հեռանկար—վրացական ուժեղ
կապիտալիստական դասակարգի առաջացման
հնթաղբութիւն—դատապարտված է միշտ
ցնորալից երազների շարքը դասվելու, ինչ-
պէս մենք իր տեղին փաստական դիտողու-
թիւններով ցոյց տուինք։

Սակայն ամենամեծ ցնորդը հէնց ինքը՝
«ինքնավար Վրաստանի» գաղափարն է, ֆե-
դերալիստների բոլոր քաղաքական մտա-
ծումների և նախագծումների այդ կուլմի-
նացիօն կէտը։ Տողերիս գրողը ոչ միայն
կատարեալ ուտօպիտական է համարում
Վրաստանի քաղաքական ինքնավարութիւ-
նը, այլև ամենամեծ հակառակորդներից
մէկն է այդ գաղափարի նոյնիսկ արծարծ-
ման, ուր մնաց իրականացման։

Ուտօպիտական եմ համարում այն հասա-
րակ պատճառով, որովհետեւ անկարելի է ե-
երեակայել որևէ քաղաքական սիտուացիա
պետութեան մէջ, որ նոյնիսկ նուազագոյն
չափերով նպաստաւոր լինի այդպիսի մի
գաղափարի իրականացման։ Պատկերացրէք
ձեզ պետական յարագերութիւնների դասա-
ւորութեան ինչ մօմենտ ուզում էք։ Պետա-

կան ներկայ կարգերում ինքը տիրող ըէ-
ժիմը թոյլ չի տայ ոչ մի դէպօւմ. դրա
մասին խօսելն իսկ աւելորդ է: Պատկերաց-
նինք մեզ ապագայում պետական յարաբե-
րութիւնների այնպիսի դասաւորութիւն,
ուր ազգաբնակութեան դեմօկրատական է-
լիմենտը ունենայ բաւական վճռական ազ-
դեցութիւն իրերի ընթացքի վրա: Այդ պա-
րագայում և «ինքն վար» Վրաստանի ի-
դէան կը մնայ ցնորքների ցնորքը, որով-
հետեւ թէ համակովկասիան և թէ մասնաւո-
րապէս վրացական դեմօկրատիան թոյլ չի
տայ երբէք մի այլպիսի ըէակցիօնէր ձըգտ-
ման իրականացում:

Հինց այս վերջին կէտը պայմանաւորում
և բնորոշում է իմ գիրքը դէպի վրաց ֆե-
դերալիստների քաղաքական ծրագիրը: Հա-
կառակում եր նրանց ոչ այն պատճառով,
որ հայ եմ—ինչպէս նրանք, իբրև նացիօ-
նալիստներ, պիտի այլպէս էլ ընդունեն,
մոռանալով որ հայերի մէջ ևս կան նրանց
քաղաքական դաւանակիցներից—այլ հակա-
ռակում եմ ամբողջ հոգով այն հասարակ
պատճառով, որովհետեւ մեր երկրի քաղա-
քական անդամանատումը խանգարում և
վնասում է նրա տնտեսակուլտուրական ա-
րագ զարգացման, դանուպեցնում նրա հա-
սարակական միահամուռ առաջադիմութեան
ընթացքը՝ ազգային մանր կղզիացումնե-
րով, ջլատում է համաքաղաքացիական ոյ-
ժերի գործունէութեան համերաշխ ներդաշ-
նակութիւնը և այլն:

Ազգային-քաղաքական ինքնավարութեան
գաղափարը համարում եմ մի նեղ նացիօ-
նալիստական ըէակցիօնէր ծզտում,—ահա
ինչով է պայմանաւորված իմ հակառակու-
թիւնը:

Բայց ես չը վերջացրի դեռ իմ խօսքը:



պան իդէօլօգների մէջ քաղաքական հնը-
նավարութեան իդէան։ Այնպէս որ եթէ
մենք ֆեդերալիստների քաղաքական իդէա-
լը անուանեցինք ցնորք, ուտօպիա, չի նը-
շանակում, որ նրա յդացումը, ծագման աղ-
բիւրը համարում ենք պարապ մարդկանց
գոչի խաղ կամ կապրիզների արդիւնք։ Ոչ,
ցնորքի՝ որպէս իդէօլօգիական հոսանքի՝
ծագ Իան աղբիւրը բէալական հողից է բըզ-
խում։ Բայց որովհետև հասարակական այն
շերտերը—խոշոր կալուածատիրութիւնն ու
հին արհեստի և մանր առևտուի ներկայա-
ցուցիչ փոքրաթիւ քաղաքացիութիւնը—
ներկայացնում են վերակեաց, կենսաղուրկ
և ապագայազուրկ կաթեգօրիաներ, ուստի
նրանց շահերից բղմած քաղաքական իդէա-
լը ևս ոչ միայն սոսկ ուտօպիա է, այլև
ըէակցիօնէր ուտօպիա է։ Եւ այնքան, որ-
քան ֆեդերալիստները ընդհանրացնում են
իրանց ըէակցիօնէր ուտօպիան և յայտա-
րարում այն որպէս վրացական համազգա-
յին քաղաքական իդէալ։ այնքան նրանք
հանդէս են գալիս, որպէս ֆէօլալական և
մանր-բոլորժուական ըէակցիօնէր նացիօ-
նալիստներ։ Այնքան, որքան նրանք թէ
տնտեսական և թէ քաղաքական մօտիվնե-
րով յարձակվում են հայկական տարրի
վրա, այնքան հանդիսանում են նրանք որ-
պէս ֆէօլալական և մանր-բուրժուական
անտիարինիստներ կամ անտի-հայկական
նացիօնալիստներ։

Այսուղի, կարծիս, տարօրինակ է թւում,

XI

թւում է, մեղ աջողվեց մինչև այստեղ
լրիւ հզրերով և օրիէկտիվ շրջագծերի մէջ
ուրուագծել վրաց մէջ որոշ ուղղութեան
պատկանող ինտելիգենցիայի հասարակական
ֆիլիօնումիան։ Մեր տուած քարակտերիս-
տիկայի ամեն մի կէտը, կարծում ենք,
հիմնարեցինք ըստ հարկին, հաստատեցինք
փաստական տուեալներով և դիտողութիւն-
ներով։

Թէ տնտեսական և թէ քաղաքական հողի
վրա գտանք բացասական գոյների մի խիտ
հիւսուածք։ Միշտ և ամենուրեք պարզելով
նրանք ոզգութեան շահերի և հայրենիքի
պաշտպանութեան կեղծ դրօշակները, եղան
դիմակազերծ և յատնեցին ամբողջ գծի
վրա իրանց շեշտակի րէակցիօնէր բնոյթը։

Տնտեսական հողի վրա նրանց իսկական
դրօշակը կրում է կօնսերվատիզմի—մի
կողմից նատուրալ տնտեսութեան, ֆէօլա-
լական կարգերի, միւս կողմից մանր-քա-
ղաքացիական ձեռնարկեստի պահպանու-
թեան—բնոյթը։ Հէնց այդ տնտեսական հո-
ղի վրա ճնշված տարրերն են—ազնուակա-
ղի վրա ճնշված տարրերն են—ազնուակա-
ղի նութիւնն ու մանը բուրժուազիան—որոնց
դրութիւնը ծնեցրել է նրանց շահերի պաշտ-

երբ խոշոր կալուածատիրութեան և մանը առևտրի ու արհեստի դասային ներկայացուցիչների—ազնուականութեան և մանր-բուրժուազիայի—շահերը զուգադիպում են իրար համերաշխաբար և հրապարակ նետում մինոյն գէնքերով զինված, նոյն ձըգ-տումներով տոգորված իդէօլօգներ:

Բայց տարօրինակութիւնը միայն ըստ եւ ընոյթին է:

Այն չափով, որով մանը բուրժուազիան—յատկապէս մանը արդիւնաբերութեան, առևտրի և արհեստի ներկայացուցիչն խաւերը—իրանց դրութեան բարեփոխութիւնը գտնում են խոշոր արդիւնաբերութեան և առևտրի, կարճ՝ նորագոյն կապիտալիստական ձեռնարկութիւնների դադարման և նոյնիսկ սահմանարժան մէջ, այնքան մանը բուրժուազիան ըէակցիօնէր է իր տնտեսական եւ սօցիալ-քաղաքական ծգտումներով, որքան էլ նա իսկական դեմոսի միանմիջական մամնիկը լինի: Այնքան նա համերաշխօրէն դաշնակցել կարող է քաղաքական կռւի արենայում միայն և միմիայն խոշոր կալուածատիրական ազնուականութեան հետ: Եւրօպայում անտիսեմիտական շարժումը գտնում է իր ամենամեծ աջողութիւնը յիշածս մանր-բուրժուազիան խաւերի մէջ, որովհետեւ այդ միամիտ տարրին հասկացնում են անտիսեմիտիզմի իդէօլօգները, որ իր նրա տնտեսական չարքաշութեան և անաջոշութիւնների միակ պատճառը հրէական կապիտալ է՝ արդիւնաբերական, առևտրա-

կան և ֆինանսական խոշոր ձեռնարկութիւնները հրէաների ձեռքում: Եւ այդ մանը բուրժուազիայից ընտրված անտիսեմիտ իւդէօլօգները բազմում են պարլամենտներում ագրարային արիստօկրատների կողքին և նրանց ծափով պար գալիս:

Այժմ պարզ է, կարծում ենք, թէ ինչն վրաց անտի-հայկական նացիոնալիստները մարմնացնում են իրանց մէջ կալուածատէր ազնուականութեան և յիշածս մանր-բուրժուազի (որքան էլ վերջինս նուազ լինի վրաց կեանքում) տնտեսական և քաղաքական ձգտումները: Զբ որ գոյութիւն ունեցող անտագօնիզմը՝ հայկական կապիտալիզմի և վրացական ազրի կուլտուրայի միջն՝ միաժամանակ անտագօնիզմ՝ է քաղաքային կեանքում՝ հայկական խոշոր բուրժուազիայի և վրացական մանը բուրժուազիայի միջև: Համաման ձգտումների նըսպատակակէտը —այն է՝ կոիւ հայկական խոշոր կապիտալի, կամ՝ ֆեդերալիստների կընքած տերժինով՝ հայկական պլուտօկրատիայի դէմ—միացըիլ է վրաց ֆէօդալական և մանր-բուրժուազիան իդէօլօգներին մինոյն բանակի մէջ:

Այժմ հարց է ծագում: Ինչպէս է վերաբերվում հայկական խոշոր բուրժուազիան կամ՝ աւելի ճիշդ՝ վերջնիս իդէօլօգիան, դէպի վրաց ֆեդերալիստների անտիարմենիզմը:

Չուտ տակտիկական կամ մամուլի պայքարի մեթօդական տեսակէտից դիտելով

հակառակորդ բանակներին, ակներև է այն
խոշոր տարբերութիւնը, որ ունեն նրանք
միմեանց հանդէս:

Վրաց մամուլը եղել է միշտ նախայար-
ձակ գիրքերում: Ամեն մի նոր դէպք, աղ-
դեցութիւնների բաղխման ամեն մի մօ-
մենտ, երբ թոյլը բնական կանօնով յաղթվել
է ուժեղից, առաջին անգամ աղմկել ու յուղել
է ժթնոլորտը վրաց նացիօնալիստական
մամուլ՝ դառն գանգատների, թունաւոր
նախատինքների, սպառնական շեշտերի ու
ժեստերի մի ահազին շարան նետելով հրա-
պարակ:

Հայկական խոշոր բուժուական նացիօ-
նալիզմը, ընդհակառակը, եղել է—նոյն իսկ
«Նոր-Դարի» շկոլան — համբերատար ու
ձեռնպահ, պարզել է քարի դրացիութեան և
եղբայրական համերաշխութեան դրօշակը,
աւետարանական բարոյախօսի մեղմալար
տոնով հաշտութիւն է քարոզել վրացիների
հասցէին:

Ի՞նչպէս բացատրել արդեօք այդ փաստը,
հակառակորդ բանակների վելաքերումների
այդ իրաւ խոշոր տարբերութեան պատ-
ճառը:

Կան հայ հրապարակախօսներ, որոնք հայ
մամուլի հաշտ ու համբերատար վերաբեր-
ժունքը բացատրում են բարոյական առա-
քինութեան և խաղաղասիրութեան մօտիվ-
ներով, իսկ վրաց մամուլի թունոտ ու
յարձակողական արշաւանքը՝ անհամբերա-

տարութեան, չարամիտ նախանձի և նեղ-
արտութեան մօտիվներով:

Միսալ է հիմնովին թէ մէկ եւ թէ միա
ընորոշումը, և մենք չէինք ուզենայ սահել
իդէալիստական միամտութեան այդ թեք
մակարդակի վրայից:

Այնտեղ, ուր կայ ճնշված, նեղն ընկած
վիճակ, բնականօրէն աւելի շուտ և աւելի
ցայտուն էջերով արտայատվում են նաև
բողոք ու տրտունջ, ըմբոստ ու յարձակո-
ղական տրամադրութիւն. այնտեղ աւելի
վաղ ու արագ կազմակերպվում է կօլէկտիվ
ձեսերի են վերածվում ճնշվածների կամքը,
ցանկութիւնը, ձգտումները: Ուրիշ խօսքով՝
ոչալ կացութեան տուեալ բնաւորութեամբ
պայմանաւորվում է նաև առաջացած իդէօ-
լոգիական հօսանքի ուղղութիւնն ու որակը:

Եւ ընդհակառակը. այնտեղ, ուր տնտեսա-
կան շահագործութեան և սօցիալական տի-
րապետութեան դրութիւնն է իշխում,
այնտեղ ոչ միայն բողոքի և յուղմունքի
կարիք չը կայ բնաւ, այլ և, ընդհակառակը,
տիրապետող տարրը շահագործված է ըստ
ամենայնի խօսափելու բողոքի և աղմուկ-
ների բոլոր առիթներից և քարոզելու հա-
յարաշխութեան ու խաղաղասիրութեան աւ-
ետարանը:

Առաջին դրութեան մէջ գտնվում են
վրաց կալուածատէր ազնուականութիւնը և
մանր բուրժուազիան. երկրորդ դրութեան
մէջ՝ հայ խոշոր բուժուազիան: Երկու
հակառակեր դրութիւններից առաջացել և

մշակվել են դասակարգային հակադիր հո-
գերանութիւններ, հակաջինջ բարոյական
քանաձեռնումներ և տակտիկական վերաբե-
րումներ:

Ահա այսպէս պիտի բացատրել երկու հա-
կառակորդ բանակների գաղափարային պայ-
քարի մեթօդական տարբերութեան հիմ-
քերը:

Բայց այստեղ մի լրացուցիչ հարց է ծա-
գում. որն է արդեօք հայ բուրժուական
նացիօնալիզմի սօցիալ՝ կուլտուրական
բնոյթը:

Մեր ուղեցոյց գերագոյն սկզբունքները,
ինչպէս կը նկատէ ամեն մի գիտակից ըն-
թերցող, կազմում էին բացառապէս մեր երկ-
րի արդինաբերական ոյժերի զարգացման
և դրանով պայմանաւորված սօցիալա-
կան պրօցեսի (կովկասեան ժողովուրդների
առաջադիմութեան) շահերը: Եթէ այդ սկզբ-
քունքների տեսակէտից բնորոշեցինք մենք
վրաց քէօդալական և մանր-բուրժուական
նացիօնալիզմը որպէս ըէակացիօնէր և հակա-
կուլտուրական, տալով ըստ հարկին մանա-
րամասն լուսաբանումներ այդօրինակ ո-
րակման համար, ապա հետևողականութեան
պարտքը ստիպում է մեզ աւելացնել. այն
չափով, որով հայ խոշոր բուրժուական նա-
ցիօնալիզմի իդէօլօգ ներկայացուցիչները
պաշտպանում են հայկական (կամ առ հա-
սարակ) կապիտալի ազատ մրցութեան
սկզբունքը և յաղթական նուաճումների ըն-
թացքը, կապիտալիստական կուլտուրայի

բարդաւաճումը մեր երկրում, —այդ յարա-
բերական չափով հայ խոշոր բուրժուական
նացիօնալիզմը լիբերալ է, առողջ կուլտու-
րական և առաջադիմական:

Կուզենայի որ ինձ սխալ չը հասկանային
և չորոնէին բարոյական տեսդենցիօլ մօ-
տիվների շաղախ այնտեղ, ուր խօսքը վե-
րաբերում է բացառապէս րէալ յարաբե-
րութիւններին և օբէէկտիվ մեծութիւննե-
րին: Հայկական բուրժուազիան, որպէս հա-
սարակական դասակարգ, կարող է իր ընդ-
հանուր հայեացքներով շատ պահպանողա-
կան լինել. դրա մասին խօսք չը կայ ներ-
կայ դէպքում: Բայց նա, իբրև տնտեսական
կաթեզօրիա, իբրև նորագոյն տեխնիկայի
և կապիտալի նման յեղափոխիչ գործօնների
տէր ու տնօրէն՝ չէ կարող յետադէմ
լինել, եթէ նոյն իսկ ուզենայ: Նրա ձեռքը
կենտրոնացած շարժուն (դինամիկական)
ոյժերը ստիպում, հարկադրում են նրան
տնտեսական նուաճումների նորանոր ու-
ղիներ հարթել:

Ահա ինչու հայկական խոշոր բուրժուա-
զիան առաջադիմ ու կուլտուրական է (ա-
մենից առաջ տեխնիքա-տնտեսական իմաս-
տով):



XII

Կարծում ենք, աջողվեց մեզ բաւական համոզեցուցիչ փաստերով սպառել մեր թեման, հիմնաւորել մեր թեզիսը։ Մենք ցոյց տաւինք, որ գոյութիւն ունեցող հայ-վրացական անտագօնիզմի հիմքերը տնտեսական են և սօցիալական, այսինքն աւելի խոր ու լուրջ պատճառներ, քան նկատում և ընդունում են երկուստեղ լիբերալ ու իդէալիստ հրապարակախօսները։

Ծնուեսական այն պատճառով, որովհետեւ լարված բանակների բոլոր լնդիարումների իրական հիմքերը թագնված են այն տրամագծորէն հակագիր արդիւնաբերական ձեերի և անտեսական կարգերի մէջ, որոնց կը ինքուրկայացուցիչներն են հանդիսանում այդ բանակները։

Սօցիալական այն պատճառով, որովհետեւ անտագօնիզմը անհատական կամ նեղ զըուպշայական բնաւորութիւն չունի, այլ նա տեղի է ունենալ հասարակական տիրող դասակարգերի միջե։

Այն հանգամանքը, որ առօրեայ պայքարին անմիջապէս չեն մասնակցում այդ դասակարգերը՝ կապիտալիստական և խոշոր կալուածատիրական կատեգօրիաները, առիթ

է տալիս մակերեսային իդէալիստին կամ միամիտ լիբերալին կարծելու, որ չարամիտ ու նախանձու, մութ ու ինտրիգան անհատներ են սոսկ, որ արուեստական գրգռումներով պղտորում են տրամադրութիւնը երկուստեք։ Որ երբեմն, տաք պայքարի շրջանում, կարող են այս կամ այն հակառակորդ բանակից տիպուր հերոսներ մասսայական պրօվկացիան իրանց սիրած արհեստը դարձնել, այդ մենք չենք հերքում և ոչ էլ ուրանում ենք։ Բայց որ մի ամբողջ ինտելիգենցիա և մամուլի օրգաններ առանց լուրջ, խոր, կենսական պատճառների հրապարակ չեն գայ իրանց դարաւոր հարեւանների գէմ կուելու, դա, կարծում ենք, լուրաբանեցինք մենք բաւական մանրամասն։ Ոչ թէ հակունեայ դասակարգերը անմիջապէս, այլ նրանց շահերի հաւատարմատարպաշտպանները, սլատենտաւոր իդէօլոգներն են պարզում դասակարգային կուի դրօշակները և ճօճում նիզակները։

Եւ հէսց այն փաստը, որ հայ-վրացական իրականութիւնների անտագօնիզմը լսարսխվում է տեխնիկա-տնտեսական և սօցիալական-դասակարգային հողի վրա, իսկ այդ անտագօնիզմի արտայատիչները հանգիսանում են տիրող դասակարգերի միմեանց բաղիսող շահերի ներկայացուցիչները, այդ փաստը ցոյց է տալիս ամենայն ակներեւութեամբ, որ մէջտեղ չը կայ և չի կարող ոչ մի դէպքում կոյութիւն ունենալ այսպէս անուանված ազգային հարց կամ ազգային

անտագօնիզմ հայերի և վրացիների միջև։
Մեր բոլոր դիտողութիւնների հիմական
միտքը հէնց դրանումն էլ կայանում էր—
ցոյց տալ մի կողմից, որ երկու իրականու-
թիւնների մէջ ազգային գերազոյն մեծա-
մասնութիւնը չունի մազաշափ շահագրգոռ-
թիւն որևէ կերպ մասնակցելու կամ արձա-
գանք տալու գոյութիւն ունեցող տարածայ-
նութիւններին։ Միւս կողմից մենք մերկաց-
րինք նացիօնալիստական ֆիզիօնոմիան այն
իդէոգների, որոնց դասակարգային շահե-
րի վտանգման վաստը և պաշտպանութեան
հարցը յայտարարում են իր համազային,
որպէսզի գրանով մոլորեցնեն ազգային չէ-
զոք ու անմասնակից ընդհանրութեան, գոր-
ծիք դարձնեն նրան դասակարգային նպա-
տակների համար և ոյժ ու էֆեկտ, այսպէս
ասած՝ ազգային-քարոյական կրեղիտ հա-
զորդեն իրանց գաղափարային պայքարին։

Այդ իդէոգները վարում են դասակար-
գային բաղաքականութիւն՝ ազգային դրօ-
շակի հովանուներքոյն նախայարձակ կողմը
(վրաց ֆէոդալական և մանր բուրժուական
իդէոգները կամ անտիարմինիստները) լա-
րում են իրանց արտիլերիան և ոռութեր
նետում իր ազգի անունով և հայրենիքի
համար։ Պաշտպանվող կողմը (հայ խո-
շոր բուրժուական իդէոգները) բարրիկադ-
ներ է կառուցանում հակառակորդների հե-
ղեղների դէմ, դարձեալ ազգութեան անու-
նից պարզելով հաշտութեան սպիտակ դրօ-
շակը։

Հարկաւոր էր հրապարակով ցոյց տալ,
որ երկու իրականութիւնների մէջ ևս ժո-
ղովրդական այնպիսի ընդարձակ շերտեր,
ինչպէս են աշխատաւոր տարրերը քաղա-
քային թէ գաւառական կեանցում—ստուա-
րախիտ գիւղացիութիւնը և քաղաքային
ազգաբնակութեան ստորին խաւերը—ասել
է ինքը զեմուսը ամբողջապէս, ոչ միայն
հակառակ հաշիւներ չունեն հրապարակով
հարթելու, այլև ունեն բոլոր կենսական շա-
հերը աւելի ու աւելի ամրապնդելու իրանց
համակենցաղ յարաբերութիւնների կապերը,
միանալու եղբայրական հաշտութեան և խա-
ղաղութեան գաղափարի հողի վրա և մտա-
ծելու միմիայն իրանց ընդհանուր քաղա-
քացիական կեանքի բարեփոխութեան մասին։

Մենք հաւատու՞ ենք այդ խոշոր, ըէալ,
ոյժերի ողջամտութեանը, առողջ ինս-
տինկտներին եւ բանականութեան—մեր
երկը բանւորութեան դասակարգային գի-
տակցութեան խորացման—որպէսզի նրանք
թոյլ տան իրանց կոյր գործիքի տիսուր
գերը խաղալու մի սահմանում, ուզ նրանց
իրարից ոչինչ չի բաժանում բացարձակա-
պէս։ Հէնց այդ պատճառով ամուր ու ա-
պահով ենք համարում այն գրաւականները,
որոնք վճռականապէս կարգելին՝ արատաւորե-
լու ազգային դրօշակը հայ-վրացական յա-
րաբերութիւնների հողի վրա։

Ինչ վերաբերում է վրաց կազմալուծվող
ազնուականութեան շահերի ներկայացուցիչ
ֆեդերալիստներին, ապա մենք վերջին ան-

գամ հաւաստիացնել կուզենայինք, որ ի
զուր են նրանց ջանքերը և ափսոս վատ-
նած էներգիան՝ բնական մրցութեան պրօ-
ցեսով աստիճանական մահացման ենթակայ
դասին փրկելու համար. նրան փրկութիւն
չը կայ բնաւ 20-րդ դարում: Ապարդիւն,
անմիտ ու անխելացի են, եթէ աւելին չա-
սենք, նրանց օրգանական առելութիւնը և
յայտարարած կրիւը ընդդէմ խոշոր կապի-
տալի, տեխնիկական ինդուստրիայի:

Առողջ և իսկական առաջադէմ մտածու-
ղութեան աեսակէտից փոյթ չէ միանգա-
մայն, թէ ինչ ազգային հատուածից են
ելուում այն գործօնները, որոնք կոչված են
մեր կովկասեան երկրի արտադրողական
ոյժերի զարգացման գործը առաջ մղելու
համար: Մենք միայն խորին գոհունակու-
թեամբ ողջունել կարող ենք, եթէ տես-
նենք, որ մեր կէսասիական հայրենիքի
ծոցում հանդէս են գալիս օբխեկտիվ պայ-
մաններ՝ մեր ազգաբնակութեան քնած ու
թմրած ոյժերը լարելու, անգործածութեան
մատնված էներգիան ինտենզիվ չափերով և
տնտեսաբար շահեցնելու—ամենուրեք շինա-
րար և ստեղծագործող աշխատանքը ծաւա-
լելու—համար: Կուլտուրական առաջադի-
մութեան այդպիսի «թուչքային» մօմենտ-
ներ կարող է մատակարարել ինչպէս ամեն
մի երկրում, այնպէս էլ մեզ մօտ, միմիայն
նորագոյն արդիւնաբերածներ, կապիտալիս-
տական արդիւնաբերութեան սիստեմը: Թող
ունենայ վերջինս իր խոշոր թերութիւն-

ները, շահագործութեան և օնոր ձեր ստըր-
կութեսն» իր հրէշային մեթօդները, փոյթ
չէ: Գիտակցենք միայն, որ այդ սիստեմից
խռուսափել չենք կարող ոչ մի հրաշքով, որ
մեր հասարակական կեանքի զարգացումը
պիտի երկաթէ անհրաժեշտութեամբ անցնէ
այդ էտապները: Ըմբռնենք միայն այդ
սիստեմի էռոթիւնը նրա տեսդենցների
դիալեկտիկական զաղոնիքները, այն, որ
նրա անաւոր քացանականը պիտի դառնայ
յետոյ նրա իսկական գերեզմանափորը...*):

Դիմադրել խոշոր կապիտալի մուտքին՝
ար ազգից ու երկրից ուզում է թող նա
գայ, նշանակում է քամու ջրաղացներէ դէմ

*.) Իմ քննադատաներից և ինթերցողներից ոմանք բա-
ական տարօրինակ նկատողութիւն են արել ինձ մի
էտական կէտում: Ես, ասում են նրանք, նկարազբել և
ցոյց եմ տուել կապիտալի և կապիտալիստական ար-
գիւնաբերութեան սիստեմի միայն դրական գծերը.
լուսաւոր կողմերը, առանց քննադատելու նրա ար-
տադրած բացասական երևոյթները: Տարօրինակ է
այս նկատողութիւնը այն հասարակ պատճառով, ո-
րովհետև այլպիսի պահանջ անողները միանգամայն
աշքաթող են անում իմ թեմայի և ծաւալը և' առա-
ջազրած նպատակը: Երբ իմ համեմատական մեծու-
թիւնները կազմում են՝ մի կողմից նատուրալ տնտե-
սութիւնը, ագրիկալուրային սիստեմը, խոշոր կա-
լուածակը ազնուականութիւնը իր պատճենաւոր ի-
դէօլոգներով, իսկ միւ կողմից նորագոյն տեխնիկան
և խոշոր կապիտալը՝ տեխնիկական ինդուստրիան իր
նորաբարգան բոլժուազիայով, այգպիսի դէպքում
միանգամայն աւելորդ է (հեղինակի լոկ հասարակական
ֆիզիօնօմիան ի նկատի ունենալով) պահանջել կամ
սպասել, որ ես շօշափէի նաև մի շաբթ հարցեր, ո-

կոիւ յայտարարելու արուեստի պարապ սէրահարների գերը խաղալ, նշանակում է ոլաւեանօֆիլների և նարօդնիկների ապարդիւն ջանքերը թափել:

Եթէ բօյարների հին, կղզիացած Ռյըլը՝ իր նատուրալ տնտեսութեամբ՝ պարտվեց Պետրոս Ա-ի և Եկատերինէ Ա-ի եւրօպակաշնացոյ, ասել է՝ կապիտալիստական դարձող Ռուսիայի առաջ. Եթէ Ղուրանի «մեծ օրէնքը» և Քանատիկ գաւակները իսլամի խոնարհվեցին և անգամ դարերով անվթարպահանվող չինական պատերը վլեցին կապիտալիզմի արշաւանքի առաջ, հաւատանք, պարոններ, որ մեր բարձրաբերձ լեռնա-


բոնք սերտ կապ չունեն իմ թեզիսների հետ: Ես կարող էի միայն ակնարկներ անել այդ ուղղութեամբ, որոնք բղխում են ընդհանուր կապա կցութիւնից: Ինչո՞ւ են մոռանում, որ իմ գրուածքը էապէս պօլեմիկական բնաւորութիւն ունի, պօլեմիկա ընդգէմ մեր երկրի արդինարելսական ոյժերի զարգացման խոչորագոյն ֆակտօրների (տեխնիկայի, կապիտալի) հակառակորդների, պօլեմիկա ընդգէմ տնտեսապէս ըէտակցիոնէր ոյժերի հին կարգերը պաշտպանողների: Ուրեմն Բնշ առիթ ու կարիք պիտի ունենայի՝ թեմայիս ամրողացման համար, կապիտալիզմի բացասականը իր հերթին մերկացնելու և քննադատելու:

Մի ուրիշ նկատողութիւնը, թէ ինչո՞ւ ես սօցիալական պլոգրեսի բնական ընթացքի մասին ասածներս չեմ խստացրել դաստիարակային կուլին խոշոր զարկ տուող աղքակով (նորագոյն դէմօկրատիայի քաղաքականութեամբ), ճիշդ է: Բայց այդ նկատողները մոռացել են թեամբ, ճիշդ է: Բայց այդ նկատողները մոռացել են մի րօպէ մեզնից անկախ պատճառները. այն ծանր պայմանները, որոնց մէջ գիճակված է մեղ այսօր աշխատել գրական հողի վրա:

Երկրի անգամ հպարտ կազբէկն ու Ելբրուսը, Արարատն ու Արագածը պիտի ճակատագրօրէն ճանապարհ տան գէպի մեղ այն տնտեսակարգին, որի տեխնիկայի առաջ չըկայ ոչ մի ընական եւ մարդկային խոշողութ ծովի, ցամաքի վլրա թէ օդի մէջ, և որը՝ միացած մարդկային հանձարի հետ՝ գիտէ թէ ովկիանոսներ իրան ծառայեցնել, թէ Հիմալայեան լեռների կրծքերը պատռել և թէ անգամ եթերային բարձրութիւնները ենթարկել իրան:

ՀԱՅՈՒՆԻՑ ՀԵՐԱԿ

Տպան Ը. 110



Վ Բ Ի Պ Ա Կ

Երես 74, 13-րդ տողում տպված է՝ 26,17%/₀,
սլեպք է լինի՝ 24,35%/₀.

ՀՀ Ազգային գրադարան



NL0393175

8439